Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

Maria Grech GANADO

FRAMED

Poems

/Armenian version/

Translated by Christina Kocharyan

Stepanakert, 2021

Մարիա Գրեչ ԳԱՆԱԴՈ

ԵՐԻԶՎԱԾՔ

բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Ստեփանակերտ, 2021

ՀՏԴ 82-1 Գանադո
ԳՄԴ 84(4)-5 «Գեղarm» հանդեսի մատենաշար
Գ 878

Գանադո Մարիա Գրեչ
Գ 878 ԵՐԻԶՎԱԾՔ: Բանաստեղծություններ (թարգմ. անգլերենից՝ Ք. Քոչարյանի), Ստեփանակերտ, «Ոգի-Նաիրի» հր., 2021. - 160 էջ:

Մարիա Գրեչ Գանադոն ժամանակակից Մալթայի թերևս ամենաճանաչված ու գնահատված բանաստեղծն է, ում գրական համբավը տարածվել է նաև տասնյակ երկրներում: Նա գեղարվեստական ուրույն ոճավորմամբ երևակում է մարդկային հոգու և կենսական խնդիրների այնպիսի անդրադարձումներ, որ օգնում են նորովի ընկալել ժամանակակից մարդուն, իրականությունն ու ավանդույթները, գտնել կեցության հոգևոր ու գեղեցիկ ապաստարաններ. սեր, ընտանիք, հայրենիք, բնություն, Երկիր մոլորակ՝ գլխավորապես այս թեմաներով է հատկանշվում Մ. Գանադոյի պոեզիան, որի հետ ծանոթությունը հայ ընթերցողին կօգնի առնչվել դեռևս իր համար մեծապես անճանաչ Մալթայի ոգուն:

Գիրքն ամբողջական թարգմանություն է բանաստեղծուհու անգլերեն ժողովածուից:

The translation of this book is funded by the National Book Council Malta Book Fund 2020.

Գրքի թարգմանությունը ֆինանսավորվել է Մալթայի Ազգային գրքի խորհրդի որոշմամբ՝ Գրքի ֆոնդով /2020/:

© Maria Grech Ganado, 2021
© «Ոգի-Նաիրի»/թարգմանության համար/, 2021

ISBN 978-9939-1-1232-9 ՀՏԴ 82-1 Գանադո
ԳՄԴ 84(4)-5

ՃԵՂՔԵՐ

ԵՐԻԶՎԱԾՔ

անշուշտ սոսկալի է -
մտքի մի երիզվածք որ գերազանցում է
ամեն պատահածի. չի կարող չլինել բայց
կարո ղ է լինե՞լ
ես ակնարկում եմ՝ դու նստած ես քո իսկ
հյուրասենյակում դեմքով դեպի արկղը
լսում կամ կարդում ես թե լրատվամիջոցներն
ինչ են գուժում առ այն որ քո ծնունդը
երիզել է քեզ այնպիսի ճիգով որ
կարող է խափանել թռիչքդ թեև
քո ID-ի համարից զատ իրոք ոչինչ չկա
որ կապացուցեր՝ դու ընդհանրապես կաս
անկախ նրանից թե որտեղ ու երբ
կամ ինչպես ես, դու շփոթահար
նայում ես այն պատին որից կախել էին քեզ
(Հայդեգերը* ով առաջադրել է «նետման»
փիլիսոփայությունը, եթե ունենար սմարթֆոն ապա
կնկարեր իր նացիստական դեմքը)
նրանք քեզ կասեն դու ներառված ես այն
երիզվածքի մեջ որ դու ես ընտրել. իսկ դու՞
դու գիտես՝ ոչինչ չես կեղծել
(դու չես հանդուրժում սին սելֆիները)
իսկ ինչպե՞ս եղավ որ նմանությունից քո
չծագեց այսպիսի խառնակչություն
քո իսկ մաշկի տակ. դու միշտ շփոթվում ես
այն մատներից որ ցույց են տալիս վանում
կերպարն այն ում որ դու բնավ չես ճանաչում

քանզի երկատված է նա ուստի ծագում են
այս հարցերը՝ դու չես կարող կապել կամ
լիովին կապվել, գիտես, և արտահոսելով
այդ էկրանի միջից դու մտադիր ես
սահմանն անցնել
մի օր

---

* *Գերմանացի փիլիսոփա Հայդեգերը հավատում էր, որ մարդն աշխարհ է «նետված» պատահականորեն, և առաջադրել է Նետման գաղափարը, ըստ այնմ՝ մեր խորհրդավոր բնությունը կամայականորեն է այստեղ հայտնվել, եւ այն անցյալը կապում է ներկայի հետ։*

ԱՐԹՆԱՑՈՒՄ

փեղկը բացվում է
Ինքնությունը շտապում է ներս
հետաքննության ժամանակ չկա
չկա քո *թույլ եմ տալիսը*
գլխիվայր սուզվելու
այնպես որ ոչինչ չլինի
ասելու բացի *օհ գրողը տանի*
կամ *ոչ այլևս երբեք*

սովորության համաձայն
ներկայացնում է կապրիչչո
պատարագ է մատուցում
և անհբարեհունչ և բարձր տոնով
քո պատուհանի մոտ նա խորամանկորեն
աղավաղում է տեսարանը

ԱՌԱՎՈՏ

կատուները զուգավորվում են.
նրանց ողբերը ցավի պես ճանկռում են օրը

մենք բոլորս դրա մեջ ենք դարձյալ,
այս արքնացումը մղում է դեպի նույն ցանկությունը,
մտագար կեղծիքը գարշելի.

կատուները զուգավորվում են.
քամին փչում է ցածրում,
ինչ-որ թռչուններ թևածում են դեռ,
ինչ-որ տեղից լսվում է տխրալի ձայնով մի երգ,
և ընդամենը առավոտյան ժամը 6.00-ն է.

ամեն, սիրելի աշխարհ,
ամեն

ԽՈՀԵՐ

եթե առավոտյան դու դրանք կախես քո պատուհանից
երբ օդը լեցուն է կսկծալի աղով կարող ես լսել՝
ինչպես են նրանք
հանց շրխկաններ աղմկահարում

նրանք կուղեկցեն քեզ մինչ դու կպատրաստես
մի գավաթ թեյդ կնստես կում-կում կխմես ու ապա
կդիտես նրանց պարը զեփյուռի տակ

որ փչում է քո պատուհանի ապակուն գծված նկարի
կողմը
Մագրիտի սպիտակ նավակի նման
երկար սպասելով

մինչ կդատարկես թեյի գավաթը, քո ծով խոհերով
ծանրաբեռնված նավակը կրկին ծով կելնի
որ մոլորվի այնտեղ

ՈՒԻԼՅԱՄԻ ՆԵՐՍՈՒՄ (1991)

Իմ պատմության սկզբում Բիլն ու Ուիլը հասակակիցներ էին և միասին երջանիկ ապրում էին «Ուիլյամ» կոչվող տանը: Ուիլյամն ուներ երեք պատուհան, բոլորը կարող էին մեկը տեսնել, մյուսի հետ քաջածանոթ էին միայն Բիլն ու Ուիլը, իսկ երրորդի մասին գիտեր լոկ Ուիլը: Առաջինը բացարձակ սովորական պատուհան էր, որի միջով Բիլն ու Ուիլը դրսում ամեն ինչ տեսնում էին՝ որպես բացարձակ սովորական ամեն ինչ, և որը Ուիլյամին բացարձակ սովորական տեսք էր տալիս, այնքան, որ ամեն ինչ թվում էր բացարձակ սովորական: Երկրորդ պատուհանն, ավելի շուտ, ուներ ռենտգենյան ճառագայթի նման հատկություններ, և դրա միջով Բիլն ու Ուիլը ամեն ինչին նայում էին ակնհայտորեն սովորական ձևով, և կարծում էին, որ ամեն ինչ այնքան ակնհայտորեն սովորական էր, որքան իրականում ներսում էր: Երրորդն արտասովոր պատուհան էր, որը նայում էր դեպի արտասովոր աշխարհը, և դրա մասին գիտեր միայն Ուիլը, և որը Ուիլն անհնարին էր համարում նկարագրել արտասովոր բառերով, մանավանդ, որ այն միշտ փոխվում էր լիովին կախարդական թվացող ձևով:

«Այն նման է - այն նման է՝ ասես լինի ամենա-ամենախոր ծովի ամենահարթակում, - նա հուզմունքով կբացականչեր Բիլին,- *կամ հենց ամենա-ամենաբարձր աստղի ամենագագաթին»:* Քանզի ինչպե՞ս նկարագրեր Ուիլը, թե ինչպես էին ժամանակն ու տարածությունը պարզապես կանգ առնում, ինչպես էին ձև ու տեսք չունեցողները խենթորեն պարում շուրջպար բռնած՝ միմյանց հետ պտտվելով, փոխանցելով լույսն ու գույնը, կատարյալ

դարձնելով ուրախությունը,- ինչպե՞ս նա նկարագրեր, որ ամեն ինչ այնքան անթերի է՝ կարծես միշտ այսպես անընդհատ փոխվում է՝ դառնալով անչափ հիանալի, անչափ թարմ, անչափ ուրախալի, անչափ խորհրդավոր, անչափ հախուռն, անչափ, օ՜հ, անչափ *ամեն ինչ:* Ինչպե՞ս նկարագրեր: Չէ՞ որ նա ընդամենը երեխա էր:

«Այն նման է գեղադիպակի,- բացականչեց նա, երբ առաջին անգամ տնտղեց մեկը,- *բայց այն գործ ունի ոչ միայն գույների ու ձևերի հետ, այլև երաժշտության, բառերի ու գաղափարների հետ և... և ամեն ինչի հետ»:* Բիլը կծիծաղեր, բայց՝ սիրալիր, և կմիանար Ուիլի ուրախությանը: Բայց նա դեռ չէր կարողանում կիսել Ուիլի՝ իրերը տեսնելու սովորությունը: Նա խելամիտ, պարզ, *լուրջ* տղա էր, ինչպես տեսնում եք, և իրականում չէր կարողանում հավատալ Ուիլի անհեթեթ երևակայումներին,- բայց երբ նա ու Ուիլը նույն տարիքին էին, հաճելի էր ձևանալ և խաղալ միասին, և նա ու Ուիլը միասին պարզապես հրաշալի ժամանակ էին անցկացնում: Սակայն կամաց-կամաց ժամանակն անցնում էր, և ժամանակի հետ իրերը փոխվում էին բոլորովին այլ կերպ, քան Ուիլի աշխարհում:

Ուիլյամը չափսերով մեծանում էր, քանի որ տների բոլորը բնակիչները կամաց-կամաց մեծանում էին, և քանզի Բիլը նույնպես մեծանում էր, նա սկսում էր գիտակցել, որ Ուիլյամը խնամքի կարիք ունի և մտածել՝ ինչպես դա իրագործել հնարավորինս լավ. որքան շատ էր նա մտածում դրա մասին, այնքան քիչ ժամանակ էր ունենում մտածելու այլ բաների մասին,- հետևելով երկրորդ պատուհանից, որ իր պատուհանների նման ռենտգենյան ճա-

ռագայթի հատկություններով է օժտված, ուսումնասիրելով դրանք վերից ու վարից՝ համոզվում էր, որ ինքը նայում է հնարավորինս լավ, համոզվում նաև, որ իրեն ևս հետևում են: Այս ամենն ու Ուիլյամի խնամքը նրանից այնքան ժամանակ էին խլում, որ շուտով հասկացավ՝ շատ քիչ ժամանակ է մնում նայել այնպես մանրակրկիտորեն, ինչպես ցանկանում էր, մանավանդ, երբ ներսում երևացողներն, իր տեսանկյունից, շատ տարբեր էին իրենից:

Որովհետև ի տարբերություն լրիվ սովորական պատուհաններ ունեցողների, ռենտգենյան ճառագայթներով օժտված պատուհաններ ունեցող մարդկանց թվում էր, որ իրենք շատ տարբեր են *միմյանցից* և հակված էին տարբերությունները տեսնել որպես «ավելի լավ» կամ «ավելի վատ», քան պարզապես «տարբերություն»: Այսպես, քանի որ Բիլը ձգտում էր ավելի ու ավելի նմանվել նրանց, ովքեր իր կարծիքով «ավելի լավն» էին և իրեն պահել նրանց նման արտաքնապես «ավելի լավ», նա ավելի ու ավելի էր նյարդայնանում նրանցից, ովքեր մեծանում էին՝օժտված «ավելի վատ» տարբերություններով, հատկապես, երբ այդ վատ վարքագիծը Ուիլյամի խնամքն ավելի էր բարդացնում և դարձնում հոգնեցուցիչ: Եվ քանի որ նրա ջղայնությունը մեծանում էր, նվազում էր նրա հետաքրքրասիրությունը, իսկ հետաքրքրասիրության հետ մեկտեղ՝ նաև նրա բարեհոգությունը:

«Ոնց որ Ուիլյամին խնամելն արդեն այնքան էլ դժվար չէ»,- նա հաճախ էր գանգատվում Ուիլին: Իսկ Ուիլը ցրված կժպտար և, մինչև միանգամից շրջվելը դեպի իր երրորդ պատուհանը կրկին, թեթևակի գլխով կաներ. *«Այո, այո, քեզ համար չի կարող հաճելի լինել»:* Կարծես գրեթե

անհավանական էր, չնայած կարող էր հավանական լինել, քանզի, ի վերջո, Ուիլյամը նաև իր օջախն էր, բայց կարծես Ուիլյամը գրեթե այնքան էլ մեծ նշանակություն չուներ Ուիլի համար: Ճիշտն ասած՝ չեմ կարծում, որ դա այդպես էր:

Գուցե Ուիլը տեսնում էր, որ Ուիլյամի համար անհանգստանալը կարծես չէր երջանկացնում Բիլին, և նա դեռ շարունակում էր կառչել այն երջանկությունից, որին նրանք ծանոթ էին նախկինում՝ մինչ անհանգստությունը – գուցե, *որովհետև* Ուիլը հավատում էր, որ դեռ հնարավոր ու *կարևոր* է երջանիկ լինել, չնայած չէր կարողանում կիսել Բիլի՝ իրերը տեսնելու սովորությունը: Նա վերերկրային, երազկոտ տղա էր, նաև՝ շատ եռանդուն և, իրականում, չէր կարողանում հավատալ, որ շատ կարևոր է լինել ողջամիտ, երբ դա ապրելու ողջ գործունեությունը, կարծես, ինքնին դարձնում էր տաղտկալի, տափակ և չոգեշնչող: Երբ Բիլը նրան հիշեցնում էր Ուիլյամի կարիքների մասին, Ուիլն իրեն հուսաբեկ ու անհանգիստ էր զգում և մի տեսակ հյուծված, երկար ժամանակ նա նույնիսկ դժվարանում էր *շնչել* Ուիլյամի ներսում: Նա սիրում էր լայնլայն բացել իր երրորդ պատուհանը և երկար ու խորը շնչել:

Հետո, որքան Ուիլը կենդանի էր, ձևացնում էր, որ Ուիլյամը ոչ այնքան իր տունն է, որքան հյուրատունը, որտեղ նա երբեմն մի կտոր հաց է ուտում կամ աչք կպցնում, երբ բացարձակապես կարևոր էր ելումուտ անող այլ մարդկանց տների մեջ ու նրանց միջև զարգացող գրավադրման բիզնեսն իր երրորդ պատուհանով: Ուիլը սիրում էր երևակայական խաղեր խաղալ, և քանի որ *շատ* հե-

տաքրքրասեր էր, սիրում էր ձևանալ. երբեմն նա *ապրում* էր Ուիլյամից հեռու գտնվող այլ տներում, նույնիսկ նշանակություն չէր տալիս, թե որքան էին այդ դրսի տները կեղտոտ, խղճուկ, թշվառ, վտանգավոր, մռայլ, գորշ, անշուք, անդուր կամ՝ պարզապես անհետաքրքիր ու անհյուրընկալ:

Չնայած նա միշտ չէր հաճույք ստանում ձևացնելու իր փորձառությունից և պարզապես անկարող էր դիմակայել ձևական այցելության զվարճանքին և փորձում էր հասկանալ, թե իրականում բոլոր տեսակի տները ինչպես ավելի լավ տեսք ունեին՝ ներսից դուրս, թե դրսից ներս: Այս դեպքում ավելի հեշտ է *շուրջը* նայել, քան վեր ու վար, որը նա փորձել էր և գրեթե անմիջապես հրաժարվել: Ինչու՞. այն հոգնեցնում ու բարդացնում էր տեսնել այն, ինչ գտնվում էր հենց իր աչքերի առաջ: Եվ չնայած նա միշտ չէր հաճույք ստանում իր փորձառությունից, նա միշտ ուրախանում էր և կյանքով լցվում, երբ ձևացնում էր: Չգիտես՝ այդպիսին ի՞նքն էր սիրում լինել, թե՞ այդպիսին ցանկանում էր, որ բոլորը լինեին: Ներառյալ՝ Բիլը:

Այսպիսով, ամեն անգամ, երբ Բիլը հատկապես հոգնած կամ մռայլ տեսք էր ունենում, Ուիլը փորձում էր իր փորձառությամբ կիսվել նրա հետ: Փորձում էր ուղղակի աշխուժացնել նրան: Որն, ընդհակառակը, կարծես թե *նյարդայնացնում* էր Բիլին: Մինչ Ուիլը կտարակուսեր, չնայած դա չէր *երևում,* որ նա երջանիկ է, Բիլը, պարզապես, կգտներ երջանիկ լինելու այլ ճանապարհ. իսկ արդո՞ք իր այդ ճանապարհն ինքնին ձևախաղ չէր: Միայն թե Բիլը ձևացնում էր, որ Ուիլյամի խնամքն ավելի կարևոր է, քան ցանկացած այլ բան. *«Դա այն է, ինչ պետք է,- Ուիլն*

ուրախ ժպտաց Բիլիկ,- մենք պարզապես խաղում ենք ֆևական տարբեր խաղեր, և դա մեզ երկուսիս համար էլ շատ զվարճալի կլինի, եթե մենք կիսվենք դրանցով: Ահա թե ինչ կասեմ քեզ. դու մի օր կգաս ու ինձ հետ կնստես իմ պատուհանի մոտ, և մենք միասին այցելություններ կկատարենք, ապա հաջորդ օրը երկուսով կմնանք տանը և կխնամենք Ուիլյամին. ի՞նչ կասես»:

«Ուիլ, Ուիլ, դու և քո ֆևախաղերը,- և Բիլը սրտնեղվելով օրորեց գլուխը,- ես ընդհանրապես ոչ մի խաղ չեմ խաղում: Ես խաղերի ժամանակ չունեմ: Ոչ էլ ժամանակ ունեմ լսելու քո անհեթեթ շատախոսությունը: Իսկ ինչու՞ ինչ-որ արժեքավոր բան չես անում ամբողջ ժամանակ խաղ խաղալու փոխարեն»:

«Բայց ես չեմ գտնում, որ այն, ինչ դու արժեքավոր ես համարում, զվարճալի է,- հակառառեց Ուիլը,- եթե նույնիսկ մենք միասին դա խաղում ենք մյուս բոլոր ֆևախաղերի նման: Եվ արդար չէ, համենայնդեպս, փորձել ստիպել ինձ խաղալ քո՝ ինչևէ կոչված խաղը, այն դեպքում, երբ դու չես պատրաստվում փորձել իմ՝ ինչևէ կոչված խաղը»:

«Խաղեր խաղալ: Զվարճանալ: Դու ինձ խենթացնում ես: Ինչու՞ չես մեծանում»:

Եվ Ուիլը նստեց իր երրորդ պատուհանի մոտ՝ հայացքը սևեռած ուրիշ տներից ներս՝ տեսնելու, թե ինչպես են մեծանում, և պարզեց, որ չափահասները, բոլորն՝ իրար նման, կարծես աչքի էին ընկնում իրենց տներին կարևորություն տալով, եթե անգամ նրանք իրարից տարբերվում են իրենց տները խնամելու յուրահատկություններով: Նրանք բոլորը համաձայն էին, օրինակ, որը բացարձակապես կարևոր է, որ իրենց տները, առաջին հերթին, լի-

նեն անվտանգ, և երկրորդ՝ հարմարավետ: Մինչդեռ ոմանք կարծես թե բավարարվում էին նրանով, ինչ ունեին. այլևս ոչինչ չէին անում, մեծամասնությունը շարունակում էր զարդարել սեփական տները, որը, համենայնդեպս, ինչպես կարծում էր Ուիլը, ոչ միայն ավելորդ է, այլև՝ ավելորդ ծանրություն: Այս իրողությունից բացի, նրանք ոչ միայն փակում էին իրենց իսկ պատուհանների դիմաց գտնվող տեսարանները, այլև, իհարկե, խաթարում էին լույսի պատշաճ ներթափանցումը: Բայց երբ նրանք այնքան խորացան, որ սկսեցին արդեն թալանել ուրիշների տները, էլ ավելի զարդարելու իրենցը, Ուիլը պարզապես աչքերին չէր հավատում:

«Այս անգամ ես, իրոք, շատ հեռու գնացի,- շնչակտուր ասաց նա,- մի՞թե ես հասել եմ այդպիսի անհեթեթ բաների արարմանը»:

Ճիշտ է՝ Ուիլի տեսած չափահասներից ոմանք այնքան հեռու էին այս համատարած խենթության վարակից, որ նրանք նույնիսկ պատրաստ էին զոհաբերել իրենց տների անվտանգությունն ու հարմարավետությունը ուրիշների տները պաշտպանելու համար: Ուիլն իսկապես հիանում էր նրանց մեծահոգությամբ ու համարձակությամբ, մանավանդ, երբ տեսնում էր, որ նրանց տների անվտանգությունն, իրոք, չափազանց կարևոր է իրենց համար. նա իրեն անսահման երջանիկ ու հպարտ էր զգում, որ Բիլը այդ քչերի շարքում է, և ոչ թե՝ շատերի: Բայց նա վշտացավ, երբ տեսավ, որ և շատերը, և քչերը չափահասների առջև դռները սողնակով ու պատուհանները կողպեքով փակելու ընդհանուր սովորություն ունեն: *«Ենթադրում եմ, որ դա անում են իրենց տները ներխուժողներից պաշտպանելու համար,-* մտասուզվեց Ուիլը,-

միայն թե նրանք կարող են լինել հավանական ներխուժողներ: Ինչ վերաբերում է ինձ պես հավանական այցելուին, ապա ես երբեք չեմ գտել, որ մտնել-դուրս գալը շատ դժվար է, նույնիսկ մինչ այժմ: Բայց, հավանաբար, երբ ես նույնպես մեծանամ, ինձ մոտ ևս այդքան հեշտ չի ստացվի այլևս»: Ահա ինչու Ուիլը զգաց, որ երկար ժամանակ չէր կարողանում չափահասների հետ նույն հայացքներն ունենալ, մանավանդ, անկախ նրանից, թե չափահասի տեսանկյունից որ ուղղությամբ նա կնայեր, ամենուր կտեսներ տներ, տներ, տներ՝ կողված, սողնակով ամրացված, ամբողջովին փակ տներ: Բացի այդ, չափահասները, կարծես, շատ չէին ուրախանում, երբ նույնիսկ իրենց նախընտրած ճանապարհով էին գործում կամ շատ ժամանակ երջանիկ չէին լինում ընդհանրապես: *«Ահա ինչու զարմանալի չէ,- մտածում էր Ուիլը,- որ նրանցից նույնիսկ ամենամեծահոգիները, կարծես, նախընտրում են փակվել իրենց տներում, երբ այնքան հաճելի է դուրս գալը, կամ թաքնվել ուրիշներից, երբ այնքան հաճելի է հյուր գնալը»:*

Ուիլն իր պարզ տրամաբանությամբ չէր կարողանում հասկանալ՝ ինչու՞ նա պետք է մեծանա իր սեփական կամքով՝ ավելի շատ, քան *քիչ*՝ նվիրված Ուիլյամին իր երջանկության հաշվին, կամ մեծանար՝ հավատալով չափահաս «այլ» աշխարհին, որտեղ նա իր կորուստը զգում էր ավելի իրական, քան ինքն իրեն: Նա չէր կարողանում հասկանալ՝ ինչու՞ է մեծանալը *յուրաքանչյուրի* համար անհրաժեշտ կամ ցանկալի, եթե մեծանալը նշանակում է նաև մեծանալ տան հետ կապված, մեծանալ չափազանց զգույշ, մեծանալ տագնապահար կամ անվստահությամբ, կռվարար կամ վատ բնավորությամբ: Կամ՝ պարզապես

դժբախտ: Այնուամենայնիվ, երբ նա փորձեց Բիլի հետ վիճել իր տեսակետով, դա այնքան համոզիչ չհնչեց, որքան, երբ նա մտածում էր այդ ամենի մասին. գուցե այն պատճառով, որ Բիլի հեղինակային կեցվածքը այնքան կասկածանքների տեղիք տվեց Ուիլի ներսում, որ նա սկսեց անհարմար հարցադրումներ անել: *«Չեմ զգում, որ սխալվում եմ: Չեմ կարծում, թե սխալ եմ մտածում: Հնարավո՞ր է, որ սխալվեմ»:* Որքան էլ որ աշխատում էր, Ուիլը չէր կարողանում ձևացնել, որ ինքը շփոթված չէ, երբ Բիլը նրան ուղղակիորեն հարցրեց. *«Իսկ ի՞նչ կասես, եթե զանազանության համար մտածես այլ մարդկանց երջանկության մասին»: «Բայց ես մտածում եմ,-* Ուիլը մռայլվեց կենտրոնանալով,- *դու գիտես, որ ես ուզում եմ բոլորը երջանիկ լինեն»:*

«Օհ, գիտեմ, բայց ի՞նչ օգուտ ինչ-որ բան ցանկանալուց, եթե պատրաստ չես ինչ-որ բան անելու, դրան հասնելու համար»:

Նմանատիպ այլ խոսակցություններից հետո Ուիլը կփորձեր գիտակցել մեծանալու անհրաժեշտությունը և ուրիշների երջանկության համար ավելի մեծ պատասխանատվություն կրելը, քան՝ իր իսկ երջանկության: Նա կցանկանար, որ դա «այդպես» լիներ, բայց, այնուամենայնիվ, որքան էլ Ուիլը փորձում էր, չէր *կարողանում* ձևանալ, որ ինքը երջանիկ է՝ չափահաս խաղալով: Բայց և այնպես, նա վճռականությամբ ու եռանդով կսեղմեր շուրթերը և կկատարեր այնպիսի լավ բաներ, ինչպես, օրինակ՝ Ուիլյամի կարիքները հոգալը, թեկուզ և հանուն Բիլի: Եվ նա կմեծանար խիստ ու չարացած, դյուրաբեկ ու զայրացած. ի վերջո, քիչ էլ «կմեծանար» Բիլին ավելի երջանկացնելու համար, չնայած չէր թվում շատ՝ Ուիլն էլ

ավելի էր խճճվում: Նա, իհարկե, չէր գիտակցում, որ թեև հայտնվում է իրերին նայելու Բիլի աշխարհում, նա դեռ ի զորու չէ դրանք նույն կերպ տեսնել,- իր սեփական տեսադաշտի սահմաններում նա շարունակում էր նայել: Նա չէր գիտակցում, որ հենց նույն պատճառով նա և Բիլը չեն կարող նույն կերպ խոսել ինչ-որ բանի մասին, նույնիսկ այն ժամանակ, երբ խոսքը «երջանկություն» պարզ բառի մասին է: Շարունակելով մեծանալ՝ Բիլի խոսակցական լեզվում ոչ միայն ավելանում էին դժվար շատ բառեր այն պարզ բառերին, որոնցով նա մի ժամանակ կիսվում էր Ուիլի հետ, այլև սկսում էր ներբեռնել լրջություն պարունակող գաղափարներ ու խոհեր, որոնցով Ուիլը սիրում էր աչքակապություն անել: Բիլի խոսքերն ու գաղափարները շարունակ դառնում էին չափազանց լուրջ ու ծանրակշիռ և դժվար ընկալելի անհոգ Ուիլի համար: Չգիտեմ՝ կամ նա անկարող էր դա անել կամ պարզապես չէր ուզում դա անել:

Ինչևիցե, ես գիտեմ, որ իմ պատմության այս հատվածում, երբ Ուիլը հուսալքված վերադարձավ իր երրորդ պատուհանի մոտ, նա, անշուշտ, չէր հասկացել Բիլի ետևում կանգնած աճող դյուրագրգռության «ինչու»-ն: Նա ի վիճակի չէր ընկալել Բիլի՝հուզմունքից առաջացած վշտի աճող լարվածությունը ծանր իրականության անգութ, անողոք պահանջների հանդեպ, որը նա տեսնում էր երկրորդ պատուհանից. տղամարդիկ ստիպված մեռնում էին սովից կամ ցավից՝ արժանապատվորեն պայքարելով գոյատևելու համար կամ ընդհանրապես գոյատևելով. տղամարդիկ գիտակցաբար ջախջախում էին ուրիշներին և հակված էին ճախողելու կամ կասեցնելու նրանցից յուրաքանչյուրի պայքարը,- տղամարդիկ ընկճվում էին

ձանձրույթից կամ նեղությունից, ճնշումից կամ անազնվությունից կամ դավաճանությունից և հաղթահարում էին դաժան ճակատագրականությամբ կամ անողոք սխրանքով. տղամարդիկ, անձնական շահերից կուրացած, ի վիճակի չէին ընդունել ինքնահերքման, ինքնազոհաբերման կամ ինքնակառավարման անհրաժեշտությունը, կամ պարզապես չափազանց թույլ էին դիմանալու այնպիսի լարվածության, որ չեն կարող հանդուրժել այն, ինչ տեսնում էին (իհարկե, կանանց՝ նույնպես): Եվ Բիլը ներքուստ զգաց ուժ, նպատակասլացություն, համարձակություն ու բարոյական պատասխանատվություն՝ օգնելու մարդկությանը գոյատևել և գոյատևել արժանապատվորեն: Նա լցվեց հաստատակամ վճռականությամբ՝ պաշտպանելու թույլերին ու կարիքավորներին, ինչպես նաև Ուիլի պես փխրուն պարզամտություն ունեցողներին: Նա հաստատակամ կանգնել էր ու ԿԱՏԱՐՈՒՄ էր: Նա նաև ուզում էր, որ Ուիլը երջանիկ լինի և սարսափում էր այն մտքից, թե ինչ կաներ նրա հետ իր տեսած աշխարհը, եթե ինքը միշտ նրա մոտ չլիներ՝ նրան պաշտպանելու համար: Սա այն պատճառներից մեկն էր, որ ուզում էր՝Ուիլը մեծանա:

«Ինչպե՞ս կարող ես պայքարել, առավել ևս հաղթահարել կյանքի ամենահիրական խնդիրները, եթե քո արածը միայն դրանցից փախչելն է»,- կպնդեր նա: «Իսկ իմ տեսանկյունից,- կհամառեր Ուիլը,- այդ խնդիրներն ընդհանրապես այնքան էլ իրական չեն թվում, մի՞թե չես կարող հասկանալ»:

«Չէ, չեմ կարող, պարզապես չեմ կարող: Հավանաբար ես նույնիսկ ավելի շատ բան կարող եմ հստակ տեսնել, քան դու՝ քո իսկ դիտանկյունից. գուցե ես տեսնում եմ, որ

աշխարհը, որից դու փախչում ես, շատ գեղեցիկ է, ուրախ ու ներդաշնակ, իսկ արդյունավետությունը, գործնական առումով, կարելի է ներկայացնել որպես գունագեղ օդի գեղեցիկ, լքված պղպջակ: Կարծում ես՝ ես չէ՞ի գերադասի լինել թռչող պղպջակ քո նման անհոգ կեցվածքով՝ ցանկանալով, որ բոլորը լինեին ինձ պես երջանիկ ու ուրախ, կարծում ես՝ հաճու՞յք եմ ստանում այնպիսի դժվար աշխատանքից, ինչպիսին իմն է... Ես գիտեմ, որ դու ապրում ես ավելի երջանիկ աշխարհում. հեշտ է լինել անհոգ, առանց բեռի: Իսկ ինչպե՞ս, ինչպե՞ս, ինչպե՞ս կարող է քո գաղափարապաշտական պղպջակներից նույնիսկ ամենագեղեցիկ գունավորվածը դատարկ բերաններ լցնել: Կամ դեմ լինել անարդարությանը: Կամ վերզգալ ցավը: Նրանք պարզապես օդից են՝ գեղեցիկ, երջանիկ օդից»:

Չնայած Բիլը հասկանում էր, որ մարդու էությունը երբեք չի կարող փոխվել, նա շարունակում էր պայքարել արդար աշխարհի մասին իր երազանքներն ի կատար ածելու համար՝ օգտագործելով իր մեջ ժողովված ամբողջ դինամիկ էներգիան: Կարևոր չէր՝ որքան է մեծ իր՝ հոգին հանգստացնելու, իրական աշխարհն իր սովով, անարդարությամբ ու ցավով անտեսելու ցանկությունը, նա գիտեր, որ, ի տարբերություն Ուիլի, ինքն ունի գործելու խորաթափանցություն ու ուժ: Բիլը գիտեր, որ իրեն վիճակված է կրել իր պարտականությունների ողջ բեռը՝ անկախ դրա ծանրությունից, որ իր պարտականությունները փորագրողը մեծանում է, և նրա հետ մեծանում էր նաև իր տառապանքի բեռը՝ ի դեմս դժվարության, հուսահատության, խոչընդոտի և նույնիսկ՝ զրպարտության: Սակայն Բիլը երբեք չէր վարանում իր վճռականության մեջ: Երբ նրա

խիստ ծեծված ոգին՝ ամեն ինչից հոգնած, երբեմն տեսնում էր ինքնավստահություն ու քաջալերանք, նա հավատքով ու սիրով շրջվում էր դեպի Ուիլը՝ փոխըմբռնման ու վստահության, ջերմության ու ուրախության համար, հավանաբար նաև երախտագիտության համար, որով չարակամ աշխարհն օժտված է միայն սահմանափակորեն կամ՝ ընդհանրապես օժտված չէ:

Ուստի, պատկերացրեք՝ ինչ էր զգում Բիլը, երբ նրան թվում էր, թե Ուիլը ոչ մի բուն հետաքրքրություն, առանձնահատուկ զգացմունք, երախտագիտություն, բարեհաճություն կամ նույնիսկ պատշաճ հարգանք նրա տառապանքի, բացառիկ առանձնահատկությունների կամ նվաճումների իրական արժեքի հանդեպ չի ցուցաբերում: Պատկերացրեք նրա անվստահությունը, երբ թվում էր, թե Ուիլի վերաբերմունքի մեջ կա գաղտնիություն, ինքնագոհ ու ժպտուն գիտակցություն, որի տեսլականը բավականին գերազանցում էր Բիլի տեսլականին: Պատկերացրեք Բիլի գերմարդկային համբերությամբ պայքարն ընդդեմ իր մենության աճող դառնության՝ ջանք գործադրելով հանդուրժողականությամբ ընդունել, որ այն, ինչ զգում էր՝ պարզապես քմահաճ ու երեխայական կամակորություն է: Պատկերացրեք, որ նա, փորձելով արդարացնել այսպիսի կատարյալ կամքը՝ այն համարելով թուլակամի անհեռատեսության, ինքնախաբեության, ինքնարդարացման անկարողություն, դեմ առ դեմ հանդիպեց իր իսկ անկարողությանը: Չնայած Բիլը պայքարում էր էլ ավելի մեծահոգի լինել, նա անուժ էր կասեցնելու իր աճող դառնությունը՝ աստիճանաբար ընդունելով Ուիլի մեկուսացումն որպես անհավատարմություն, համառությունը՝ որպես թշնամություն, անկախությունը՝ որպես մարտահրավեր,

ինքնավարությունը՝ որպես սադրանք և նրա՝ Բիլի արժանիքի չափազանց ակնհայտ թերագնահատումը՝ որպես դիտավորյալ և նույնիսկ չարամիտ ցանկություն ցավ պատճառելու համար: Քանի որ Բիլը միշտ հավատացել էր Ուիլի սիրուն, նա իրեն մերժված, չգնահատված ու խաբված էր զգում՝ հետևում թողնելով այն, ինչ նրա համար ամենաթանկագինն էր: Նա շատ վիրավորված էր:

Երբ Ուիլը զգաց Բիլի վիրավորանքը և կռահեց դրա պատճառը, նա բացահայտեց, որ չնայած նա չի կարող հասկանալ Բիլի նախապատվություններն այնպես, ինչպես Բիլը չի կարող հասկանալ իրենը, այնուամենայնիվ, նա յուրացրեց Բիլի ցավը և կարողացավ յուր ցավի պես զգալ այն: Նա այնքան էր սիրում Բիլին, որ չէր կարող իրեն լիովին երջանիկ զգալ, քանի դեռ իր հոգսը ցավ էր պատճառում նրան: Գրեթե ամոթահար նա կրկին փորձեց հասկանալ, թե որն է պատճառը, որ Ուիլյամի խնամքն ու մեծանալը այդքան կարևոր էր դարձել: Նա սկսեց ավելի հաճախակի նայել երկրորդ պատուհանից: Ինչևիցե, Ուիլի տեսածը վրդովեցնելու փոխարեն նրան միայն շփոթեցրեց ու ապշեցրեց, ինչը շուտով նրան դարձրեց ավելի ու ավելի տխուր ու միայնակ: Նա տեսնում էր, որ տղամարդիկ ստիպված ծանր ու չարքաշ, չարքաշ ու ծանր աշխատանք էին կատարում ժամ առ ժամ ու օրեցօր, նրանց սրտերն ու հոգիները սառած էին մռայլությունից: Նա տեսնում էր նաև՝ ինչպես են մարդիկ հույսով լցվում՝ թափահարելով Արդարության պաստառները և զգում էր, որ նրանք ճողոպրում են դեպի ինքնակործանում կամ դրդում էին տղամարդկանց ծանր ու չարքաշ, չարքաշ ու ծանր աշխատանք կատարել օր առ օր և օրեցօր:

Այո, նա ևս առաջընթաց էր տեսնում, նա վստահ ու անանձնական խոյանում էր մարդկային քնքշության մութ ոլորտով, որն անհիշելի ժամանակներից սպասում էր նրբորեն դարմանող գիտակցության ջերմությանը: Նա հասկանում էր՝ ինչ է տառապանքը, երբ տեսնում էր, թե ինչպես են մարդկային անմեղությունը, մարդկային բարությունը, արժանապատվությունն ու ուրախությունը դանդաղորեն արատավորվում ոչ միայն ցավից կամ սովից, չարիքից կամ անտարբերությունից, այլև միայնությունից ու թշվառությունից, տաղտկությունից ու հուսախաբությունից: Ինչպես նաև չափազանց կոշտ արդարությունից կամ՝ աշխարհը տառապանքից ազատելու կույր ու բռնի անհրաժեշտությունից:

Ուիլը զգում էր, որ իր վրդովմունքը կծկում ու կոտրում է սիրտը, նույնիսկ երբ նա, հեռուն գնալով, հուսահատ գիտակցում էր ջանքերի, լարվածության, ընդվզման անօգտակարությունը և սրտով, և իր իսկ անօգուտ հոգատարությամբ: Չնայած Ուիլն այժմ բավականին արագ էր մեծանում, նա դեռ չէր կարողանում պատշաճ գիտակցել: Երբ Ուիլը շատ ու շատ ջանաց ամեն ինչին նայել ավելի ու ավելի մոտ ու առանց բացառության և, հաշվի առնելով իր տեսած բոլոր հնարավոր այլ բաները, նա պարզեց, որ բոլոր այդ այլ բաներն իրենց հերթին միայնակ են և զգաց՝ հոգնած ուժասպառ է լինում իր տեսածի հիման վրա արված մեղավոր ենթադրությունների ծանր բեռան տակ: Ավելին, քանի որ Բիլը սովորաբար չափազանց զբաղված էր լինում կամ աշխատում էր բոլորից շուտ տեղավորվել, Ուիլը դառնում էր էլ ավելի միայնակ, միայնակ, միայնակ:

Ուստի Ուիլը սկսեց փորձել ամբողջ ուժով հավաքել

ինքն իրեն և դադարեցրեց նաև հոգ տանելը: Նա ջանում էր ամեն ինչ անել էլ ավելի արագ մեծանալու համար և սովորել ծաղրել բոլոր նրանց, ովքեր ծաղրում էին միմյանց իրենց ամուր փակված երկրորդ պատուհաններից և չէին կարողանում տեսնել, թե որքան է ինքը՝ Ուիլը, տարբերվում բոլորից, ովքեր իրականում չեն տարբերվում միմյանցից: Քանի որ Ուիլը շատ կոտրված ու հուսալքված էր, նա հարմար գտավ վերլուծել և հատված առ հատված քննարկել, դասակարգել և, ընդհանրապես, մտովի համեմատել.

- նրանց ընդհանուր մտահոգությունը տների հանդեպ, հատկապես՝ իրենց սեփական
- նրանց ընդհանուր դժկամությունը՝ ինչ կա տեսնելու՝ պատուհաններից միմյանց նայելով
- նրանց ընդհանուր արհամարհանքն այն անլիարժեքության հանդեպ, որը նրանք տրամադրված չէին տեսնել
- նրանց ընդհանուր անհանգստությունը՝ պահպանելու իրենց առավելության անվտանգությունը,

և երբ նա յուրացրեց այս ամենը՝ մտահոգությունն ու դժկամությունը, արհամարհանքն ու անհանգստությունը, նա զգաց, որ կիսում է նրանց ընդհանուր հիասթափությունն ու ընդհանուր վախը, ինչպես նաև նրանց ընդհանուր դժկամությունը՝ իրենց գերգիտելիքների սահմաններից դուրս՝ իրենց տեսածն ավելի խոր ու մանրամասն ընկալելու համար: Նա զգաց, որ իր կողմից յուրացված նյութի մեծ մասը ապականված ու ապականող էր, և որ ինքը, մեծանալով, դառնում էր ավելի ու ավելի պառակտված, ավելի քմահաճ, ավելի տաքարյուն և ավելի ու ավելի ագրեսիվ: Եվ նա երջանիկ չէր: Բիլը՝ նույնպես:

Զարմանալի չէ, որ Ուիլի մոտ, այնուհետև, ավելի ու ավելի մեծ ցանկություն առաջացավ երկրորդ պատուհանից դառնալ դեպի իր սեփական արտասովոր երրորդ պատուհանը, և փորձեց երազել այն անսահման հրաշքների երկրում, որ նա տեսել էր: Բայց նա այնքան էր տխուր-տրտում, որ վիրավոր թևերով թռչնի նման չէր կարող դուրս թռչել: Դրա պայծառությունը շլացնում էր նրա աչքերը՝ լցնելով կարոտով, բայց և վախով, քանզի նա անկարող էր արդեն վստահել իր իսկ ծանրությունից իրեն բարձրացնելու իր կարողությանը: Եվ չնայած նա չէր կարող նաև համբերել՝ վերադառնալու երկրորդ պատուհան, այնուամենայնիվ, երբեմն ցանկանում էր, որ ինքը ևս Բիլի պես կարողանար հավատալ, որ երրորդ պատուհանը ոչ այլ ինչ է, քան պատրանք. իր ներսում այնտեղից դուրս թռչելու անհանգստությունը տանջում էր ընդմիշտ քնելու ու երազելու կարոտով: Բայց նա վախենում էր նույնիսկ երազից: Այսպիսով, նա մեծանում էր անտարբեր ու անկյանք և օրերով նստում էր՝ դուրս նայելով պարզապես չտեսնող աչքերով: Հետո մի օր նա հասկացավ, որ իր աչքերն արդեն սովորել են պայծառությանը, և նա սկսեց առանձնացնել շարժվող նմուշների փոքր կտորներ ու մասնիկներ, որոնք մի ժամանակ այնքան հարազատ էին նրան: Նրա սիրտն ալեկոծվեց և սկսեց ավելի թեթևանալ ու հույսով լցվել. գուցե մի օր նա կկարողանա դուրս թռչել, վերջին հաշվով:

Հետևաբար, նա ավելի ու ավելի էր իրեն տեսնում առանց Բիլի, բայց, այնուամենայնիվ, փոքր-ինչ մտահոգված էր նրա կամ իր երկրորդ պատուհանից տեսած ցանկացած մեկի առնչությամբ: Մինչև մի օր նա այլևս դրա կարիքը չունեցավ, քանի որ ամեն ինչ դարձավ ավելի

պարզ, քան երբևէ, և նա ավելի թեթևացավ, թեթևացավ ու թեթևացավ, մինչև հասկացավ, որ կարող է թռչել: Այդ չեղյալ օրը Ուիլն այլևս չտեսավ աշխարհը երրորդ պատուհանից այն կողմ: Նա այլևս չէր տեսնում, բայց միշտ այնտեղ էր լինում: Եվ հենց նա այնտեղ եղավ, նա ոչ միայն բացահայտեց ինքն իրեն, այլև Բիլին և յուրաքանչյուրին՝ յուրովի, և ոչ միայն դրսում և միայն մեկին, այլև ներսում, որտեղ նրանք միշտ լինում էին: Եվ ոչ միայն հետները՝ դրսում, այլև՝ միայնակ, և բոլորն այսպես միասին, որտեղ նրանք եղել են ողջ ճանապարհին: Վերջապես Ուիլն իմացավ այն, ինչ նա հասկացել էր միայն երկրորդ պատուհանի շնորհիվ. նա գիտակցում էր, որ այնտեղ կարիքն այլություն չէ, ընդդիմություն չէ, անարդարություն չէ, ապարդյուն բան չէ, մենակություն չէ և կարիք չէ: Գիտեր նաև՝ ինչու:

Տեսեք՝ երկրորդ պատուհանը միայն կարող էր նայել դեպի դուրս և մյուսների միջով, այն չէր կարող երրորդ պատուհանի նման նայել դեպի ներս ու Իր միջով: Այն ակնհայտ տարածայնություններից ելնելով՝ չէր կարող նայել կիսված սահմանին և կիսված սահմանից ելնելով՝ անսահման սիրուն: Իսկ հիմա Ուիլը կարող էր. Ուիլը հասկանում էր նույնիսկ այն, ինչը նա երբեք չէր կարողանում հասկանալ: Եվ քանի որ Ուիլը հասկանում էր, նա ընդունում էր ցանկացած թուլություն, որ երբևէ ունեցել էր, ամբողջ նրբությունը առանց դատապարտման կամ պարսավանքի, զիջողության կամ պայմանի կամ հարցի, և նույնքան հարգանք, կարեկցանք ու քնքշություն էր նա զգում առկա ամեն ինչի հանդեպ, նաև՝ իր: Գտնվելով իր առանցքում՝ Ուիլը հասկացավ՝ ինչ էր զգում նրա հանդեպ, ինչպես անսահմանությունն՝ իր առանցքի, ուր պտտվում էր ներդաշնակության հավիտենական տիեզեր-

քը, այնպես, որ ներկայիս սահմանափակ աշխարհն երբեք չէր իմանում: Երբ նա ընկղմվեց, տրվեց վշտին և միանգամից դարձավ մենություն, որ երբևէ եղել էր կամ կլիներ, Ուիլը վերացրեց ամբողջ լարվածությունն ու հակասությունը, չարությունն ու մեղսավորությունը - մահկանացու կոչվածի ամբողջ տառապանքը, հոգնածությունն ու ցավը, և նրան իր գիրկն առավ Գոյությունը՝ իր էությամբ Գոյության մենությունը: Եվ գտնելով, որ միայնակ լինելն ավելի շիտակ է, քան եսի եզակիությունը, Ուիլը միանգամայն երջանկացավ:

Ավելին, տարօրինակն այն էր, որ երբ Բիլը պահանջեց Ուիլից կրկին լուծել Ուիլյամի խնդիրները, կարծես թե Ուիլը նույնիսկ ավելի երիտասարդացավ, և նա սկսեց առավել հաճախակի նայել երկրորդ պատուհանից: Իսկ Բիլը կարծես իր տարիքից առնվազն երկու անգամ մեծացավ: Իսկ ի՞նչն էր առավել արտասովոր. այն, որ ինչքան էլ ուշադիր նայեիր Ուիլին, իսկապես չէիր կարող ասել՝ նա տղա՞ է, թե՞ աղջիկ: Նա կարծես թե շատ չէր անհանգստանում, երբ, արդյունքում, Բիլը հաճախակի էր այցելում: Նա դեռ փորձում էր Բիլի հետ խոսել արտասովոր պատուհանի մասին, բայց Բիլի գռեհիկ ծիծաղը չէր թողնում բարի լինել, և այն նույնիսկ դառնում էր առավել ծաղրական և, ընդհանրապես, առավել ցինիկ: Այսպիսով, Ուիլն ավելի ու ավելի քիչ էր հետևում նրան: Բայց պետք է խոստովանեմ, որ նրա սրտում դեռ մեծ տխրություն էր տիրում, որովհետև գիտեր, որ չի կարող Բիլի նման մարդ գտնել, ով կհավատար երրորդ պատուհանի գոյությանը, քանի որ մյուսները, ովքեր նայում էին իրենց տների միայն առաջին պատուհանից, գտնում էին, որ դժվար է հավատալ երկրորդին:

Նա սա գիտեր այնքան լավ, որքան գիտեր, որ դա կախված է միայն *նրանից,* որ ինչ-որ մեկը կարող է փոխակերպել մի աշխարհ, որը ոչ խաբեությամբ, ոչ մերժմամբ, ոչ ինչ-որ բանով, ոչ ինչ-որ *մեկի օգնությամբ* երբևէ *էապես* չի կարող փոխվել: Որ միայն երրորդ պատուհանով Ինչ-որ Մեկը կարող է նայել ոչ միայն մի ծայրից մյուսը, կամ միայն ներսը, կամ միայն առջևը, կամ միայն հետևը, այլև՝ ներսում ու նաև՝ դեպի դուրսը: Չնայած Ուիլը կարիք չուներ պատճառ կամ զվարճանք փնտրելու երջանիկ լինելու համար, մինչ նա կարող է ապրել ներսում և դրսում, նա վշտանում էր Ուիլյամի ներսում, քանզի չէր կարողանում Մարմնավորել այն, ինչը նա տեսնում էր դրսի աշխարհում: Մինչ Ուիլի հասկացողությունը հասունանում և բաբախում էր նրա ներսում, ինչպես կաշկանդված լիություն, ինքը վշտանում էր Ուիլյամի ներսում, որովհետև չէր կարողանում Բիլի հետ կիսվել այս երջանկությամբ:

Եվ քանի որ նա անկարող էր իր մեջ պահել սիրո այս անսահման զգացմունքը, Ուիլը դեռ մեկ-մեկ փորձում էր տարբեր առիթներով համոզել Բիլին. *«Խնդրում եմ, Բիլ, խնդրում եմ՝ նայիր գեթ մի անգամ. դու պարտավոր ես, դու պետք է նայես»: «Ի՞նչ նկատի ունես՝ «ես պարտավոր եմ»,-* այսպես Բիլը մեծանում էր՝ վախ ներշնչողի ու անհանդուրժողի պես:- *«Ես պարտավոր եմ», իսկ ինչու՞ ինքդ քեզ մի լավ չես նայում քո պարտականություններից խուսափելու համար արդարացումներ գտնելու փոխարեն»: «Իսկ ես այնքան շատ եմ ուզում, որ դու երջանիկ լինես,- պնդում էր Ուիլը,- որովհետև ես քեզ այնքան եմ սիրում»: «Լինել երջանիկ, ուրեմն, լինել երջանիկ, դու*

երբեք չես փոխվի. ինչպե՞ս կարող եմ երբևէ ինչ-որ բան լինել, երբ միշտ այնքան բան ունեմ անելու, ինչպե՞ս կարող ես ինձնից ակնկալել, որ ես կտարվեմ պատրանքային երրորդ պատուհանից նայելու շռայլությամբ, երբ դու միշտ Ուիլյամի բարեկեցության ողջ բեռը դնում ես իմ բազմաչարչար ուսերին: Ինչ վերաբերում է սիրուն, սիրուն ու սիրուն... դու անկարող ես քեզնից բացի մեկ ուրիշին սիրել: Դու պարզապես եսասեր, անզգա ու եսակենտրոն ես, ահա՝ով ես դու»:

Բիլն աստիճանաբար ոչ միայն անհնար էր համարում վստահել Ուիլի՝ հավանական ուրախության դյուրազգաց պատկերացումներին ցավի աշխարհում, այլև հենց այդ ցավի պատճառով նա նաև բացահայտեց, որ զայրանում է նույնիսկ այն հավանականությունից, որ Ուիլը կարող է իրականում զգալ այդպիսի ուրախություն ընդհանրապես:

«Այո, իհարկե,- հեգնեց նա,- երջանկություն, սեր, ուրախություն ... պարզապես նայիր քեզ՝ իդեալական ներկայացում»:

Այնուամենայնիվ, ամեն անգամ, երբ Ուիլը, կարծես թե անտեղյակ Բիլի բուն ներկայությունից, մտքերի մեջ հանգիստ խորասուզված՝ շարժվում էր դեպի երրորդ պատուհանը, Բիլն ավելի էր վրդովվում այն տարօրինակ խուսափողական ու խռովահույզ զգացողությունից, որն, ընդհանուր առմամբ, իրերի հանդեպ ունեցած իր իրական հայացքներով հանդերձ, անկարող էր բացատրել. նա դա, պարզապես, չէր կարող հանդուրժել:

«Կարծես բավական չէ, որ նրա՝ աջակցելու հրաժարման պատճառով, ես ստիպված կրկնապատկում եմ իմ աշխատանքն ու մտահոգությունը, կարծես բավական չէ նաև, որ ես դրա համար շնորհակալության փոխարեն վի-

բավորանքի եմ արժանանում, հիմա էլ նա ինձ ստիպում է լինել անհարմար վիճակում, նույնիսկ այն ժամանակ, երբ ես ուզում եմ փոքր-ինչ հանգստանալու պահ որսալ: Ես պարզապես չեմ կարող դա տանել այլևս»:

Այսպիսով, Բիլն ավելի ու ավելի էր հեռանում Ուիլից, պարփակվում իր մեջ և նույնիսկ ավելի անխուսափելիորեն ձգվում դեպի իր իսկ էության հուսադրող աղմուկ-աղաղակը: Նա ավելի ու ավելի էր *ամաչում* Ուիլի անդուր ներկայությունից ու մերձությունից Ուիլյամում, և այս լարվածությունն այնքան ուժեղացավ, որ նույնիսկ զարմանալի էր, որ Ուիլյամը չպայթեց կամ լիովին չավերվեց: Քանզի իրականում Բիլն այլևս չէր կարողանում տանել այդ ամենը և վառվում էր մեկընդմիշտ Ուիլին լռեցնելու և Ուիլյամից հեռացնելու այրող գաղափարից, նա ակնկալում էր, որ մի օր դա նրան կհաջողվի: Առանց, նույնիսկ, իմանալու, որ նրան դա արդեն հաջողվել է (թեկուզ նա չէր հավատում, որ դա արված է). Բիլը կողպեց երրորդ պատուհանի փեղկերը, մինչդեռ Ուիլը պարապ-սարապ ման էր գալիս, ուստի և չկարողացավ վերադառնալ Ուիլյամի աշխարհ: Կարծում եք՝ նա կցանկանա՞ր վերադառնալ այս ընթացքում: Կամ երբևէ կցանկանա՞ր, եթե Բիլը չլիներ: Չնայած ամենատարօրինակն այն էր, որ հենց դա պատահեց. Բիլն այլևս չկարոտեց Ուիլին և նույնիսկ չհիշեց, որ նա երբևէ եղել է Ուիլյամում, ընդհանրապես: Եվ կարծես՝ մինչ նա ավելի ու ավելի էր մեծանում, Ուիլը նույնքան փոքրանում էր, իսկ այն ժամանակ, երբ Բիլն իրեն ամբողջովին հասունացած էր զգում, Ուիլն ընդհանրապես անհետացել էր անգամ նրա հիշողությունից:

Եվ դեռ այն ժամանակ, երբ Բիլը մենակ էր ու մտազ-

բաղ, նրան տանջում էր մի տարօրինակ ու անհանգստացնող զգացմունք՝ կարծես ինչ-որ բան բացակայում է այժմյան *կարգապահ, կազմակերպված, բարեկեցիկ* Ուիլյամի մեջ: Կամ ոչ թե ամբողջովին բացակայում է, այլ՝ անտեսանելի է: Մի արտասովոր ու անհանգստացնող զգացմունք համակել էր Բիլին՝ ինչ-որ մեկը *նայում* էր նրան: Եվ ով գիտի, գուցե Ուիլն էր նայում: Ով գիտի, գուցե Ուիլը դեռ չի կարող տեսնել Բիլին հավիտենության մեջ հարմար դիրքից, որտեղ պատուհանների կարիք չկա. եթե Ուիլը շարունակեր նայել, հաշվի չառնելով Բիլի բուռն ջանքերը, Ուիլյամը կսկսեր ավերել, քանդել ու մասնատել՝ ստիպելով Բիլին զգալ նույնքան մռայլ ու սպառված, որքան իր խարխլված հին տունն էր: Ով գիտի, եթե Ուիլը մշտապես նայեր նրան՝ նույնիսկ զգալով ավելի միայնակ ու հիասթափված, ավելի հոգնած ու հուսահատ, գուցե Բիլը դարձյալ չհիշի անգամ նշույլներ փոքրիկ Ուիլից, ով անսպասելի կարոտով կարող էր հանկարծ վերադառնալ:

Բայց երբ, «իմանալով», որ այս ամենը վերաբերում է միայն Բիլի ապագային Ժամանակի իրական աշխարհում, և իրական պահին այդ Ժամանակը դեռ լի է նպատակներով, իսկ Ուիլը գտնվում է Ուիլյամից հեռու, չեմ կարող ասել, թե ինչ վերջ կունենար այս պատմությունը: Միայն կարող եմ ասել, որ, իմ կարծիքով, եթե Բիլը երբևէ ցանկանար Ուիլին վերադարձնել, նույնիսկ մինչ Ուիլյամը վերջնականապես կծանրանար նրա ուսերին, գուցե նա ևս կարողանար հավատալ երրորդ պատուհանին: Գուցե նա կարողանար գտնել ու փակել այն փեղկերը, որոնք իր ձեռքով էր բացել: Ով գիտի: Եթե Բիլը երբևէ գեթ մի անգամ նայեր Երրորդ պատուհանից, գուցե նա ևս ցանկանար միանալ Ուիլին մեր եղած-չեղած երկրում՝

ժամանակից, տարածությունից ու տարբերությունից անդին: Եվ երկուսն էլ կարող էին հավերժ մնալ նույն անչափահաս տարիքում:

Հավանաբար նույնիսկ Ուիլյամը կարող էր ծիծաղից ցնցվել և զուր սպասել ժամանակին ու իրական աշխարհին, մինչ Բիլն ու Ուիլը միասին կորոշեին՝ կցանկանա՞յի՞ն, արդյոք, նրան այնքան ճնշեին՝ մինչև կկործանվեր, թե՞ իրենց հետ ընդմիշտ երիտասարդ ու երջանիկ կպահեին: Ո՞վ գիտի՝ գուցե դա հնարավոր լիներ իմ պատմության միջնամասում, եթե Բիլն ու Ուիլն ավելի շատ ուշադրություն դարձնեին միմյանց, քան Ուիլյամի՝ չափազանց շատ կամ չափազանց քիչ կարիքներին: Ամենից առաջ, ո՞վ գիտի՝ ինչ կլիներ, եթե երկուսն էլ, կամ նրանցից յուրաքանչյուրը, ավելի մեծ ուշադրություն դարձնեին Ուիլյամի, քան նրա կարիքների վրա: Գուցե Ուիլյամն ուներ մեկ այլ պատուհան, որի մասին ոչ նրանց, ոչ էլ նույնիսկ ինձ, ոչինչ հայտնի չէ: Գուցե Ուիլյամն ուներ *շատ* այլ պատուհաններ: Գուցե, գուցե - կամ գուցե՝ ոչ: Ո՞վ գիտե: Ո՞վ կարող է երբևէ իմանալ: Դու կարո՞ղ ես:

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

ՈՒՂԵԿՑՈՐԴՆԵՐ

ՄԻՄԵՍԻՍ

առօրյա կյանք, առօրյա մարդիկ, գլխի զարդարանք
այստեղ
յուրահատուկ մազերի ոճ՝ այնտեղ, հավանաբար
ոչ թե շեղելու
ուշադրությունը դեմքից այլ ցրելու հետաքրքրությունը
դիմագծից արտահայտությունից ամեն դեպքում
ոչ թե որ նա նկարիչ է չնայած դա ստույգ
բնավորություն է. ասում են
իսկական դիմանկարչությունը ձգտում է հաղորդել
ոչ թե կալանել
բնորդի նմանությունը՝ գուցե և իրական բայց ոչ
ճշգրիտ. իրական ճիշտն ըմբռնելու համար
պահանջվում է ավելին քան
արտացոլում են հայելիները. այո ես նույնպես դա
տեսնում եմ հիմա.
հետաքրքիր է արդյո՞ք Ջոկոնդայի դիմանկարն այս
ոմն Մոնա Լիզայի ստույգ նմանակը չէ. նրա ժպիտի
պատմությունը
հայտնի՞ էր Դա Վինչիին նրա դեմքն ավելի
դուրեկա՞ն էր անցյալ
այն ժամանակ թե՞ այն էր ինչ հիմա կա՝ միայն
համակող
կնո՞ջ թե՞ տղամարդու աչքեր ենք մենք տեսնում. իսկ
արդյո՞ք տեսնում ենք
այդ ժպիտը մարտահրավեր կլինի մյուսներին
նույնիսկ երբ այլևս
մենք չլինենք՝ ի վերջո հասկանալով որ լոկ արվեստը
կարող է ծաղրել

մինչ մենք մեծանում ենք. մի՞թե հավերժությունը
չի հուզում բոլորիս
եթե ոչ ինչու՞ ենք մենք այստեղ կանգնած.
Դա Վինչին ինչպես և իրական
կինը շատ վաղուց մահացել է իսկ նրա նկարը
շարունակում է շնչել.
դա չէ՞ ճշմարտությունը

ԱՆԳԻՐ

այժմ այս պատուհաններից ներս կան արվեստի
փիլիսոփայության
պոեզիայի և այլ նմանատիպ մագաղաթների
գերազանց օրինակներ.
այո այո ի՞նչ է պատահել տիկին, ո՞վ էր զգում դա

բայց տիկին այդ հարցը ոչ այստեղ է քննարկվել
և ոչ այնտեղ
թանգարանները անտեղի իրերի
մանրամասնությունների համար չեն
սրանք գանձեր են որ պահպանվում են ի շնորհիվ
խնամքով համակարգված
առաջավոր տեխնոլոգիայի -
այն ամենն ինչ դուք խնդրում եք
հստակ ցուցադրված է քարտի վրա՝ աջ մասի
ներքևում. բայց ի՞նչ
կապ ունեն զգացմունքները նրանք
քեզ կամ ինձ նման հասարակ մարդիկ չէին

բայց խնդրում եմ զգույշ լինել տիկին մի արտաշնչեք
հայելու վրա
կհեռանա՞ք հիմա նրանց հետ ովքեր մնացել են մեզ հետ
Տիկին

ԲՆՈՐՈԾ ԳԾԵՐ

մեր ժամանակը գրեթե անցել է և միշտ նկատել ենք՝
ոնց է
այս տաքարյուն ըմբոստացողը թավ հոնքերի տակ
հորինել աչքեր
այն էլ վառվռուն
իսկ հիմա անցնենք արիստոկրատին –
նրա ազնվական քիթը հպարտորեն վեր է ցցվել փառքից
կամ այս աղջկա վառ ու չարաճճի
շուրթերից հնչող
դյութիչ պատմությունը ունկնդրենք դարձյալ

այո պարոն իհարկե ձեռքերը նույնպես ունակ են
պատմել՝
զգուշորեն հենվելով աթոռի թիկնակին
կամ ծնկներին կամ մատներով փեշերից բռնելով
որոնք երևութապես
կմտնեն վեճի մեջ մեկը մյուսի հետ կամ կերերան
տեղում
կթրթռան հանց թռչնակներ՝ պատրաստ թռչելու
առաջին իսկ պահին

այստեղ Դուք ճիշտ եք. խաղաղ մթնոլորտը ծրարում է
ամբողջը փոխանցում ծերունու իմաստախոսությունները
հանգիստ կեցվածքն ու ուրվագիծը նրա անխռով
ձեռքերը պայծառ
արժանապատիվ հայացքը որը հավանաբար
արտացոլում է անձնուրաց

կյանքը սպասելով վերջին իր հանգրվանին

բայց այստեղ կա մի բայց. վախենամ Դուք կրկին
ճիշտ եք պարոն
ժամանակը լրվել է և նույնիսկ դիմանկարների
պատկերասրահները
ժամանակի հետ պետք է փակվեն

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ

ԵՐԿՈՒ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԱՂՋԻԿՆԵՐԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ

(Ուիլի Ապապից)

իհարկե դեռ անմեղություն գոյություն ունի և եթե նայես
անգամ հեռվից աչքի տակով ու գլխով անես գուցե
ճանաչես բայց թողնես-հեռանաս,- այն պատկերը որ
ընդմիշտ կմնա քեզ հետ պատկերը կլինի երկու
երիտասարդ
աղջիկների՝ սպիտակ հագած ու դեռ անմեղալի

դու չես հիշի այն բոլորածալերը
որ թրթռում են նրանց ուսերին՝ հանց կարճ թևեր
կամ ուսկապերը երիզող կապույտ անհամբերությունն
այստեղ
և վարդագույն անուրջներն այնտեղ

պե՞տք է որ փնտրես հետագայում՝ ինչ է թաքնված
գույնի հետևում որ գույնն է քողարկվում բացահայտման
տակ, գուցե կարող ես զգալ ու հասկանալ մաշկի
հուզմունքը նրա խռովքը, արյան ձգողությունն այդ
երկու դեմքի
որ մեծանում են դա գիտակցելով,- հույզերը
պայքարում են
ծագող մտքերի դեմ՝ ժամանակի պես անցողիկ
մարտահրավերներով

իհարկե դեռ անմեղություն գոյություն ունի բայց
նաև տխրության հետք փոփոխության պահին.
գուցե անխոնջ համառությունն է այն յուրացնելու.
եթե առավել մոտիկից նայես մաշկի ծակոտիներին
գուցե նկատես ինչպես է մաքրվում, թողնելով
անցքեր որ աշխարհը շնչի

ՔԱՂՑՐԱԲԼԻԹ

Մայրս միշտ գիտեր՝ որ ճանապարհով գնալ,
իր ուժեղ հոտառությամբ, նա զգում էր հացի հոտը
դեռ մի տարի առաջ, և գուցե այդ է պատճառը, որ
նա ընտրել է լեցուն ամբարը՝ լավագույն արդյունքի
հասնելու համար. ուստի, երբ հայրս տեսավ նրան
փոքրիկ հովանոցի տակ օրորվելիս, ինչպես ցորենի
դաշտը արևի ներքո՝ ինչպե՞ս կարող էր չհուզավառվել:

Մի՞թե նրանց զուգավորումը համեմված չէր հունձքով,
կալսով, խմորումով, հունցի իմաստությամբ.
նրա ժպիտն ասես թթվեցրած խմոր լիներ ներսում.
չեմ կարող ստույգ ասել, բայց տարիներ առաջ էր դա.
ես ծնվեցի, հետո միայն քույրս:

Մենք նստում էինք ու խաղում ամբարների վրա, մինչ մեր
հայրը հարդ էր քամհարում տղամարդկանց հետ՝
օդը թողնելով խառնաշփոթի մեջ. զվարճալի, բայց
հոգնեցուցիչ էր,-
և այդ բերկրալի ունայնության կողքին մայրս
նախընտրում էր
ուշք չդարձնել բնավ սեփական պատմությանը՝
իր իսկ ստեղծումի մեջ.
որպես իր ժամանակի կին նա գիտեր՝ սերմերի
հոգատար խնամքը
հենց ինքը՝ ամբողջ կյանքն է, որ պահանջում է կնոջ
հոտառություն՝ այն զգալու և բեղուն փոր թխելու
համար:

ՍՊԱԳԵՏՏԻ ԲՈԼՈՆԵԶԵ

երաժշտությունը, արվեստն ու թանգարանները մեր
ճանապարհորդության հիմնական պատճառն էին.
դա լավ էր
մեր մտքի համար, ծնողներս համաձայն էին՝
կերակրվել մշակույթի բազմազանությամբ. իհարկե
դա հոգու սնունդ է,
որը կարող է ավելին լինել քան ցանկությունը, բայց
մարմինը նույնպես իր ապրուստի կարիքն ունի.
բոլորը գիտեն՝
mens sana -ն գտնվում է *corpore sano** -ում.
համադամասեր մարդը կասեր՝
գայթակղիչ ճաշացանկի թովչանքում են կենում
ամենահամեղ հաճույքները

չնայած փորձագետ չէր, բայց հայրս համտեսում էր
տեղական ամեն մի ուտեստ՝ խանդավառվելով
յուրաքանչյուրից,
նա հաճույքով ուտում էր ցանկացած ժամի,
ցանկացած նոր բան
ուտում էր ըստ սովորույթի՝ բավականությամբ,
մաքրում էր ափսեն
ամենավերջին փշրանքից.-
բայց հայրիկիս հետ կապված իմ սիրելի
հիշողություններից մեկը հավերժ կմնա այն, թե նա
ինչպես էր
բերանը սոուսից սրբելուց առաջ գոհ բացականչում՝
ուր էլ որ լիներ, ինչ էլ որ ուտեր,
ճաշում էր տանը թե դրսում

մի լավ ափսե դիզած բոլոնեզե սպագետտին
այն կերակրատեսակն է, որն անհնար է չուտել

---

* *mens sana in corpore sano (լատ.) - առողջ հոգի՝ առողջ մարմնում*

ԼՈՒՄՆՈՍԿԻ
(քրոջս՝ Աննային)

այսօր վաղ առավոտյան, ջերմաչափը բերնիս ես
ուրվագծում եմ քեզ մոտիկից որպես հուլիսյան թռչուն
կամ ոմն
բյուզանդական կայսր ով լարի վրա խաղում է
ծաղրածուի պես

արթնացիր արթնացիր, դու այնքան գեղեցիկ ես
դեռ այս փոշու կույտի և գորշ սրտերի մեջ
քեզ համար իմ լեզվով կքանդեմ ես այն
ցանցերը որոնցով խճճված էր մեր մեռնող հայրը

մեր մայրը մտամոլոր երգում էր՝ քեզ վերադարձնելով
Եգիպտոսի եղեգնուտ ու երգերի շամբուտ, ճոճելով
ծառերի գագաթներից կախված մեր օրորոցը՝
երկնքին մոտ.
նրանց մեղեդին դեռ հետապնդում է ինձ
առեղծվածային
ճաճանչի պես, ծաղրելով հոգիս առկայծումով
հանց մեղրամոմ գիշերվա մեջ

ԶՈԼԱՎՈՐ ՇԱՊԻԿՆԵՐՈՎ
ԵՐԵՔ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԼՈՒՍԱՆԿԱՐ

Սրանք իմ արտադրանքն են. պետք է գործել խնամքով:
Գիտեմ որ դրանք վաղուց սպառված են
և այժմ անհույս հնացել են
որ մեր գործարանը փակվել է
երկու ձեռքն այլևս ավելորդ են դարձել
և անգնահատելի փոխհատուցումը չի գտնվել երբեք

Այս ծամածռությունները այս չարիքը պտուղները չեն
որոշ ներդրումների որ ձգտում էին հավաքել
բերքը իմ կյանքի աշխատանքից. դրանք
աշխատանքն են իմ մարմնի իմ արյան
մշակված հեռավորության չափաբաժնով՝
օգնելու նրանց գտնել իրենց իսկ սեփականը

Նրանց չեն մեծացրել ապահով լինելու համար
աշխարհը հիմա նրանց տունն է:

«Մարքսի գրվածքների մեջ կա բավականին անսովոր մի փաստաթուղթ: Այն վերնագրված է՝ «Peuchet: vom Selbstmord» (Gesellschaftspiegel, zweiter Band, Heft VII, Elberfeld, Januar 1846), և բաղկացած է Ջեքս Փոյեթի կողմից թարգմանված հատվածներից. «Du Suicide et de ses Causes» (Մի գլուխ նրա հուշերից): ... Ինչպես կտեսնենք, Մարքսի այս փոքրիկ և գրեթե մոռացված հոդվածը բանկ ներդրում է ժամանակակից բուրժուական հասարակության չարիքներ-ը, նահապետական ընտանիքի կառույցի պատճառով կանանց հասցված տառապանքները, սոցիալիզմի չարիքները՝ լայն և համընդհանուր համատեքստում ավելի խորն ընկալելու խնդրում»:

- «Անսովոր Մարքսը», Միշել Լյովիի գրաքննադատական հոդ-վածը

ԱՐԻԱՅԻ ՏԻՐՈՒՅԹԸ
(Waldbühne[1]. Իտալական գիշեր)

Ծերացած կինը, ընկղմվելով Տան մեջ, որտեղ մենք
տեղավորվեցինք,
արագ թոշնեց: Մենք վշտացանք, քանզի նա մոռացել էր՝
ինքն ով է, մոռացել էր իր կենսուրախ էությունը
գեղեցկության մեջ,
բնության մեջ, արվեստի մեջ: Մեր մեջ:

Բայց և այնպես այդ բացառիկ գիշերը, երբ մենք
միասին
հեռուստացույց էինք դիտում, ձեռքս գցեցի նրա
կորացած ուսերով,
նա հանկարծ շփոթվեց և դանդաղ բարձրացրեց
գլուխը՝ արձագանքելով
ինչ-որ ձայնի: Հրատապ: Այնտեղ կանգնած էր
Բրին Թերֆելը[2]՝ հանց
մռնչացող Յագո, ծոմռված բերանով, խճճուն
խարտյաշ մազերով,
կկոցուն աչքերով՝ հանդուգն ու կրակոտ

credo in un Dio crudel [3]

1.Waldbühne /գեր./ - անտառային թատերաբեմ

2. Բրին Թերֆել - ուելսցի օպերային և համերգային բաս-բարիտոնային երգիչ

3.credo in un Dio crudel - ևենգ Յագոյի արիան Ջուզեպպե Վերդիի «Օթելլո» օպերայում

Դա նրա խոստովանությու՞նն էր: Եթե այո՝ ապա
ինչի՞ համար: Կնոջ բռունցքը
կարծես սեղմվեց, և երկուսի աչքերը, թվաց՝ փայլեցին:
Արիայի տիրույթի համար նա կրկին կենդանացավ,
ապա փակեց աչքերը: Մոռացվեց:

Մինչդեռ Բրինը խոնարհվեց՝ մոռանալով
իր զորության մասին.
չարաճճի քմծիծաղ հոնքերի տակ

vien dopo tanta irrision la Morte[4]

4.vien dopo tanta irrision la Morte - երրորդ Մահը գալիս է այսքան իռացիոնալությունից հետո

ՄԻ ԱՅԼ ՏԱՐԱԾՔ

նա այլևս չի անհանգստանում ցրված թղթերի համար,
այլևս անկարող է մաքրել դրանց փոշին
կամ վերևում դարսած փոշոտ գրքերը

բայց շնչառության պես թափանցում է իմ կոպերի
միջով
և ուղղորդում ինձ խառնակ ննջասենյակս առանց
մենմի բառի
նրա մատներից շրշում են ճերմակող մազերս

եթե անգամ նա անգիր գիտեր դրանց ուրվագծերը
որոնք մի ժամանակ անմատչելի էին
որտեղ փոշին որ կնստի կրկին անկախ նրանից՝ որքան
լավ է սրբված կամ խոզանակով ինչպես է մաքրված

քանզի գիտեմ որ ոչ մի ազնիվ բան չի կարող
լինել այնքան բաց-քնքուշ որքան նա ինձ հետ է
ես դանդաղ ամփոփվում եմ նրա ծնկներին

լույսի առաջին ակնարկից իսկ նա թառամում է
թողնելով վերջին մի քանի պուտեր իմ դեմքի վրա
ինձ պատրաստելով *որպես լավ մայր* ով
կհետևեր նրան ավելի կոկիկ տարածության մեջ

ԱՅԴ ԳԻՇԵՐ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26, 1987թ.

Հիշում եմ՝ շուրջս մեղմ ձայներ կային՝
գրեթե սփոփիչ և ստվերներ ճախրող՝
հանց լապտերների ցուցահանդեսում, իմ ծանր
կոպերն օրորվում էին նրա մահճակալի մոտ
գտնվող էկրանի ճառագայթներերից: Հետո մի սուլոց
և դեղնագույնը պարուրեց նրա ամբողջ մարմինը:

Աչքերը հակած՝ բուժքույրը մրմնջաց՝ կներեք,
և քաշեց սավանն ու նրա դեմքը ծածկեց:
Երբեք չէի տեսել, որ ոտքի մատները զգաստ կանգնեին
այնպես հանդգնաբար, ինչպես իմ հոր կյանքը:

ՃԱԾ

ճանապարհ ընկանք ճաշելու վերջապես
այս գեղեցիկ երիտասարդն ու ես.
վաղուց նման զգացմունք ես չեմ ունեցել
մի կողմ դնելով հուզմունքն ու ամոթանքը
պետք է խոստովանեմ որ շատ ուրախ եմ
տեսնել ինձ նրա ընկերակցությամբ
երբ մարդիկ նայում են և գլուխ տալիս ժպտում են
կանգնում սեղմելու նրա ձեռքը
կամ ընդհանրապես խոսում են մի քիչ

և երբ վերջապես նստեցինք մի տեղ
ես կարողացա լրիվ տեսնել նրան
բայց բջջայինը չթողեց որ նա
մենակ մնա ինձ հետ – ո՞վ գիտե
ինչեր էր անցնում նրա մտքով
որը ես մի ժամանակ այնքան լավ գիտեի
նա չէր կարող սպասել ինձ հետ լինելու համար
նա չէր կարող սպասել ինձ հետ խոսելու համար

թերևս նա միակ տղամարդն է
ում ես սիրել եմ այնպես ինչպես պետք է սիրեն -
սիրել իր բոլոր թուլություններով հանդերձ
ներելով ամենն այն ինչ նա արել է
թաքցնելով և այն թե ո՞նց էի տենչում
ճաշել որդուս հետ

ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(թոռներիս՝ Լյուկին,
Սամուելին, Միային)

իմ մարած արգանդը ազատվել է
իր պարտականություններից
նա շրջվում է կնոջ կողմը, հասած նուռն ահա
կպայթի մինչ ես շրջվում եմ դեպի նրա՝ պատին տպած
նկարը՝
Լեոնարդոյի Աննայի
ժպիտն անդրադառնում է սերնդապատումին,
սերնդի որին
Աստվածամայրն իր գիրկն է առել վերջավորությանց
շոշափելի
կապով՝ էվոլյուցիայով հղի
և ես դառնում եմ իմ սիրասուն մայրը
ով չկա հիմա բայց ով ինձ ունեցել է իր
ապագայի համար ինչպես որ ես եմ ունեցել դստերս
և այս նոր ծնունդները կշարունակվեն երբ ես
այլևս չեմ լինի.
ես դեռ կիսով չափ մտահոգված եմ այս
գործընթացով՝ ինչպես ենք հեռանում մինչդեռ
իմ դուստրը
հոգոց է հանում ճանկում ձեռքս և դնում իր
փորին. այո ես զգում եմ նոր սերնդի աճը
ինչպես է հառնում իմ առաջին թոռը
.....

իսկ հետո երկրորդը
հաճախացնելով արյան զարկերակը.
և ահա ես կրկին այստեղ եմ հիմա անտեսելով
Լեոնարդոյին՝ ժպտալով մայրիկիս անմոռաց ժպիտով
քանզի երկրորդ աղջիկս թեթև ծիծաղում է՝
ամեն ինչ լավ է

այս անգամ պիտի խոստովանեմ՝ իրոք ուրախ եմ
որ աղջիկ է

ԾՆՆԴԱՏՈՒՆ

Մայիսի 20, 2006 թ

փորձեմ ճիշտ հասկանալ

իմ դուստրը ոչ միայն իմ դուստրն է
նա կինն է մեկ ուրիշի որդու
ով երբեք զավակս չի եղել

այլ մի անծանոթ մեկօրյա մոր
գալարվելով շորի մեջ ավագ մեկի համար
կրելով ձեռնոցներ ու սայթաքուն գլխարկ

երբ նա լեզուն հանում է մողեսիկի պես
բուժքույրն ասում է՝ նրան դուր է գալիս կաթի համը

ես ցնցված եմ ծնողներիս հարազատ արյան
առաջին համով
որ սակավորեն բայց պահպանվել է հետագա սերնդում
ես տատիկ եմ իսկական մեծ տատ

և ես դողում եմ այդ խիստ ահռելի մեծությունից
ես կծկվում եմ իմ հագուստի մեջ

առաջին օրն է՝ Լյուկը չի լացում
իսկ նրա մոր մայրը լացում է ահա.
երկրորդ աղջիկս հնազանդորեն մայրացնում է ինձ

ԶԱՐԿԵՐԱԿ
(Լյուկին, 4 պարեկան)

օդը ձեռքեր ունի որոնք սեղմում են քեզ գրկում և
պահում մոտը
որոնց շնորհիվ կարող ես ծավալվել նրանց
տարածքներում
որոնք ստեղծվել են քո և ոմն մեկի միջև առկախված
տխրության մեջ
կամ գուցե ցավի բայց հավաստիաբար,
սահմանափակված
քո իսկ մտայնությամբ՝ աչք փակելով այս աշխարհի
վրա ավելի հստակ
քան աչքերը կփակվեն. քո կոպերը սավառնում են այն
ոլորտներում որտեղ լույսը հավիտյան չի նվազում
որտեղ ամեն ինչ ալեկոծվում է ջրի նման

օդն արտահայտում է բառեր որոնք թաքցնում ես
քո լեզվի տակ
կամ սայթաքելով մտնում են ականջներդ որտեղ
խոսքերը
կիսով չափ հասկացվում են կամ անտեսվում սաստիկ
երբեմն ամպերը սահում են երկնի լայնքով
նրանց հետ շարժվում ես և դու՝ անխոհ անարգել,
լույսի ներքո
որպես կաթիլ ապաստան գտած լուսնային հևքում

օղը ձեռքեր ունի որոնք պարուրում և ստեղծում են
հիազմայլությունն ու հավիտենականությունը,
մինչ դու կլսես
մարմնիդ շուրջ շքերթող օրերի աղաղակը որ
համառորեն
պնդում է թե դու դեռ այնտեղ ես, ուր մի երեխա քեզ է
կանչում և փորձում հասնել քո ձեռքերին: Լույս կար
այդ ձայնի մեջ
միայն նրանը կարող էր մոտենալ՝ փոքրիկ տղայինը.
ամեն
բացահայտում նրա ապագան է: Դու զգում ես
նրա զարկերակը
որ թրթռում է քո բութ մատի տակ

ՊԱՐԶ ՈՒՐՎԱԳԻԾ

եթե ուզում ես ստեղծել մի պատկեր ահա մի աղջկա
ուրվանկարը ով անխոս կանգնած է երկաթգծի վրա՝
հայացքը նետած ծովախորշին
ոտքի մատները կծկած. աղի գոլորշին պատել է
աղջկա մաշկը փոշին
փարվել է նրա ոտքերին թաց մազերը վզին. ամեն ինչ
այնքան խառն ու կպչուն է որ այդպես չի լինում
նույնիսկ լողից հետո. ինչևիցե
«վաղը» միշտ կա – նրա արևը կրկին կփայլատակի
նրա ծովը զով կլինի
ինչպես միշտ նրա մարմինը կմնա ճկուն ճաշին
ձուկ և նրան սպասող գիրքը կլինի երբ լուսնալույսը
չբավարարի
նավթի լամպերը պատրաստ կլինեն բերանի համը
կիթառի հպումը նվագի տիրույթը մշտապես կլինեն –
նրա կյանքն ամառ է լի բազմատեսակ գունեղ
ընծաներով
նա կկլանվի ինչպես ջրում. ուրեմն վստահ եղիր որ
նրան նկարես առկայծող դեմքով քանզի նրա աչքերը
արարված են ոսկուց

մի հետաձգիր այս ժիր պատկերը երկար մի սպասիր
նա պետք է գնա այնտեղ կոշիկով որտեղ կյանքն է
գնում ոտաբոբիկ

ՏՈՀՄ

Սարդոստայնապատ, շինծու ծաղկեպսակներով լի
թաղման այս փոքրիկ մատուռի մեջ են
ծնողներս հանգչում

մինչ մտապատկերիս մեջ հայրս բռնում է ձեռքն իմ
Վալետայի[1] ռմբակոծված բայց դեռ դյուքական
Ոսկորների մատուռ սրբավայրում

երեխային թողած ես կիսով չափ սիրահարված[2] էի
ոչ միայն այդ օր
այլև այդուհետ

ի՞նչ կարող եմ կտակել երեխաներիս հիմա
հեշտ մահից* բացի թե՞ կտակեմ խաղաղ հեռացում
կես-սիրած կյանքից

տոհմածառի համար նախագծված
ոստայնապատ մատուռն այս իրար հետ կապում է
ընտանեկան ոսկորները

գուցե բարի է հնչում բայց գայթակղությունն այդ
բավարա՞ր է իրոք հանձնվելու համար

---

1. Վալետա կամ Լա Վալետա - Մալթայի Հանրապետության մայրաքաղաքը

2.«Ode to a Nightingale», Keats – «Ներբող Սոխակին», Ջոն Քիթս

ԱՅԼ ՆԿԱՐՆԵՐ

ընկերներ ու լանդշաֆտներ

ԴԵՄՔ
(Ա.-ին)

ցոլցլուն երկինքը հալչում է նրա
հոնքերի տակ խորհող և զգուշավոր աչքերի մեջ –
ահա նրա բնույթի յուրահատկությունը. նա ասում է

բերանի մի ծայրով որ հեգնաժպիտ ամուսնանում է
բարության հետ խնդրելով
«կարդա ինձ» «մի կարդա ինձ»

նրա դեմքն եմ ես ահա փայփայում
իմ ժպիտներում

DÉJÀ VU[1]
(Վիրջինիայի Արվեստի ստեղծագործական կենտրոն)

հետո ներս է մտնում Գվենը՝ կեղտոտ խալաթով և
հպվում պարանոցին ու վերձիգ սանրվածքին նրա
այնպես որ Բոտիչելլիի[2] մահվանից ի վեր
առաջին անգամ կգայթակղվեիր նրա արտաքինին
ստորագրելու՝ «Արարիչ»

ակամա իրական թարմություն

իսկ մեկնաբանությունները սկսվում են խոհանոցում
որտեղ գալիս էինք ճանկելու ուտելիք, քննում էինք
օրինակ
ինչպիսի տեսք ուներ Գվենը նախորդ գիշերվա հորդ
անձրևի տակ
նրա հովանոցով՝ վաճառականի փողոսկրե կերպար

ես այնտեղ չէի, բայց ինչ-որ տեղ լսվում էր
«Շերբուրգյան հովանոցներ» երգի կրկներգը և ես
դիտում էի
Գիրքոն սլացող հեծանվի Արվեստը կարմիր աղյուսը
կանաչ տորֆը
ծառերին վազվզող սկյուռները և ինչպես այստեղ

ոչ մի ամուսին ոչ մի երեխա ոչ մի թոռ
և հենց ինքը Գվենը որ դեռ չծնված
դժվար թե ներս մտներ

---

1. DÉJÀ VU (ֆր.՝ Déjà-vu)- Դեժավյու՝ արդեն տեսած երևույթ, ընկալման պրոցեսի խախտումներից մեկը, որի դեպքում մարդուն թվում է, թե իբր անցյալում ինքն արդեն գտնվել է նման իրադրության մեջ, որտեղ այժմ նա հայտնվել է:

2. Սանդրո Բոտիչելլի կամ Ալեսսանդրո դի Մարիա Ֆիլիպեպի - վաղ Վերածննդի իտալացի գեղանկարիչ և գրաֆիկ:

ԹԱԿՈՑ
(Այլինին)

կան մարդիկ որոնց մենք չենք կարող տեղավորել
խեղաթյուրման ծիրում մենք հակված ենք ծրագրել
ժամանակը
մենք չենք ընդօրինակում նրանց
ինչպես բամբասանք՝ մաղվելով օրերի միջնաթելերով
մենք տեղափոխում ենք նրանց ուղիղ ներս

այնպես որ երբ դռները կողպվեն իսկ պատուհաններն
ավելանան ընտանիքի ճյուղերի աճման հետ մեկտեղ
երբ երևակայությունը մարի և մենք կարծես թե
ամեն ինչ մոռանանք
կգտնվի անշուշտ կյանքը ճյուղավորելու մի այլ
ճանապարհ.
այս օդային պղպղջակն է որ կընդհատի հոսքը
և կսպասի հեռավոր իր իսկ տարածքում
մինչ դատարկությունը հնարավոր կլինի ճեղքել

իսկ հիմա խնդրում եմ ներիր ինձ եթե մոռացել եմ քեզ
և չեմ կարող հիշել այն մարդուն որը ես երբևէ եղել եմ.
արձակիր պղպջակը, թող այն արտացոլի հենց
այն մեկին
որին քո կարծիքով լավ ես ճանաչում
և ես դեռ պետք է դառնամ ինքը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԼՈՂԱՎԱԶԱՆ
(Ինդիանային՝ 2 տարեկան)

ցածր օտար ձայներ էին
ծույլ լողավազանի շուրջ
հետո
անսպասելիորեն
հաճույքից ծղրտալով
Ինդիանան ներս նետվեց

նա չտեսավ մեր ապշած հայացքները
ոչ էլ կարողացավ
ժպիտ փոխանակել
և միայն ջրի թևերն էին
արտահայտում հրճվանքի լեզուն
որ կարող էին հասկանալ լոկ հրեշտակները

մի պահ գրեթե հավատացի
կրկին երկնքի զորությանը

ԺԱՆԵԿԱԳՈՐԾՈՒՀԻՆ

մատներով խաչաձևելով ներկան իր դռան մոտ
նա չէր նկատում թե որքան արագ ու ճկուն են նրանք
նախշազարդում ժամանակը՝ անվրդով ինչպես սարդը
կիյուսեր իր ոստայնը ճանճ որսալու համար
կամ արևի ճառագայթները կբռնեին փոշին

հետո երբ առաջին անգամ զբոսաշրջիկները
առկայծեցին նեղլիկ փողոցներում, ես տեսա նրան
իր խաչի հանգույն, եկեղեցու ճամփին թաքնվելիս
ժանյակի շղարշի տակ. մի սրբություն
հյուսված իր իսկ հելուններով

ավելի ուշ սակայն նրա ձայնը հառնեց բուռն աղաչանքի
տրտնջոցով. «Ժանյակ, տիկին,- ես կարծես լսում էի
նրա աղոթքը,- գոուզիտանական* ժանյակ, տնական»
և այդպես
ասես մետաղադրամներ են ղողանջում մուրհակները
խաչաձևվում են
գիշերը ժանյակները գալիս են ծածկելու սառած
մարմինները

ամեն արժեքավոր բան իր գինն ունի
այդպիսինն է ժամանակի օրինաչափությունը

---

* *Գոուզոու- կղզի, որը գտնվում է Մալթյան կղզիախմբում՝ Միջերկրական ծովի կենտրոնական մասում:*

ՆՄՈՒՇ (2 ՆԿԱՐ)

դրանում նա նման է դեռ ցողակիր ծաղկի
մազերը խաղում են զեփյուռի հետ
լուսանկարիչը նրան նկարեց թռչելու պահին

բայց այս փայլի մեջ՝ թիթեռի նման պատենավորվեց
և դարձավ նախկին բոժոժը
նրա աղամանդե ժպիտը չի կարող քողարկել
քարե հայացքը

ինչ-որ տեղ նրա անակնկալ խենթությունը մոլեգնում է
ցնցելով նրան անճիգ բռնկմամբ
փռելով մետաքսն իր խարխլված երկնքին
որտեղից դեռևս կախված է

մարող ուրվապատկերը ցամաքեցրեց նույնիսկ
արցունքներն
իմ. այն ոչ այլ ինչ է քան մի մեռած տիկնիկ՝ հեռու
այն բացատից
ուր բաժանվել էինք անբաժան անցյալում իսկ այժմ
կործանված է հիմնահատակ

ԶԻՆՎՈՐԻ ԿԻՆԸ
(Վաննիին)

Նա վերադառնում է ոտաբոբիկ ու տանջված
նրա ոտնամատների եղունգները նման են
թշվառ դեմքի, նրա ճաքճքած
կրունկները նման են գարշահոտ խրամատների:
Ես չէի հավատում, որ կորած գարունը վերստին կգա և
ես կրկին կշնչեմ նրա թարմ օդը:
Մեր մարմինների միջև հիմա ավազապարկեր են:
Երբ ես համբույրներով օծում եմ նրա սև կոշտուկները,
նա հառաչում է, մինչդեռ նա հաճույք էր ստանում
նախկինում.
նա դժվարությամբ մտավ իմ աչքերի, ապա զինավառ՝
իմ մարմնի մեջ: Մի վերջին հառաչ: Ծխախոտի ծուխ:
Ես փորձում եմ նրան շոյել իմ բարակ ու բուրավետ
մատներով,
որոնք բուրում են այն ծաղիկների պես, որ նա քաղել էր
ինձ համար՝ մեկնելուց առաջ – այդ ժամանակից ի վեր
ոչինչ չի աճում: Ցայժմ ընտելացել եմ
նրա բացակայությանը և ճանկռտելով անցել
դրա միջով՝
իմ իմացած միակ կյանքի:

ՆԿԱՐԻ ՏՂԱՆ

(նկարը՝ Եվենա Ե. Գիորգիի)

ահա ինչ ենք մենք նրան թողել, բնավ ոչ այս
տոչորուն հողը
չարախինդ անձրևին բարկացած նայող ամպերը

նոր աշխարհները ծագել են բավական զայրացկոտ
ջրերում
կլիմայի փոփոխությունը ևս պատկանում է
ինչ-որ առասպելի

կիզիչ արևը թունավոր օդը մարդկությունն ինքը
արմատախիլ է անում
անցյալը որին մի ժամանակ հայտնի էր Գարունը,
տարվա եղանակները

ոչնչացման առջևից պետք է ընթանա արարչագործումը
թվում է ամենն այն ինչ մենք գիտենք որպես հույս ու
ապավեն

այս տղային բնավ չի հետաքրքրում, և մեր իմացածը,
նա ուշք չի դարձնում
կանանց հեքիաթներին և վստահորեն քայլում է այս
նոր Երկրի վրա

նետելով ամենը ինչ անողոքաբար քայքայվում է
իր թիկունքում

թույլ տալով՝ կորուսյալը սահի իր մատների միջով

ոտքերը միշտ առաջ են տանում նրան
մշտապես առաջ
դեպի մի մոլորակ՝ հանց լուսատու գունդ իր ձեռնափին

մենք նույնիսկ չենք կարող հուսալ որ կըմբռնենք մի օր
նրա ճիշտ ժամանակը, նրա երկիրը

ՓԱՅՏԻԿ

մեկեն դուռը շրխկոցով փակվեց պոռթկուն քամուց
աղբարկղները իրար զարնվելով թափվեցին փողոցում
և դղրդյունով ոռնացին գլխիդ մեջ

դու երազում ես ելնել կրկին
գտնել կորսված փայտիկն ու
նվագավարել աղմկոտ աշխարհդ

մինչև որ ծառերի ուշիմ տերևները
դիմադրելով հախուռն քամուն
կվերցնեն փայտիկը քո ձեռքից

ԵՐԵԿՈՅԱՆ ԶԲՈՍԱՆՔ (Gharghur*)

Ես ամենաերջանիկն եմ, երբ, լինելով հեռվում,
կարողանում եմ հոգիս հանել նրա կավե տնից
(Էմիլի Բրոնտե)

հորիզոնում ողողանջում են եկեղեցու զանգերը
և այդ ընթացքում ես հիանում եմ բնապատկերով
բայց և այնքան էլ ուշք չեմ դարձնում դրան

երկու սայրաձող խոյանում են երկինք
վերում՝ կապույտի բաց տարածություն
բարձրում՝ ինքնաթիռի սպիտակ շերտագիծ

նաև սգաղողանջ՝ մտադիր պատմելու
ընդհատակի մասին

մեջքիս հասցված ուժգին պոռթկումները հանկարծ
ցուցանեցին
որ այս միտքը երբեք չպետք է հետ պահի ինձ
իմ իրական շնչի ըմբոշխնումից

քանզի այն փախչում է մանրախնճից օդի հետ
միախառնվելու համար
հակառակվում նախանձոտ զգացմունքներիս
բայց և ինչ-որ չափով անտեսում է դրանք

արհամարհելով՝ ինձ սփոփելու բոլոր այն փորձերը
որտեղ պարզապես փոշի ու մոխիր են բնավորվում

---

* *Gharghur (Գարգուր, մալթ.՝ Hal Gharghur) - գյուղ Մալթայի հյուսիսային շրջանում:*

ԶԲՈՍԱՆՔ

սպիտակ ամպեր անծիր լազուրում
խառը երանգներ թփերին ու ծառերին
ես ու դու զրուցում ենք մտովի՝ հաչող շանը
թողնելով մեր ետևում – երիտասարդ տարիներ.
երբ խոսում ենք այլ լեզվով ակամա
բացահայտում բնության մեր շավիղը
ցավոք հիմա մենք կախված ենք թելերից
և փխրուն անչափ - որքան ճարպիկ էինք առաջ.
բայց հիմա մենք գիտենք

սպիտակ ամպերը լազուրի և ես ու դու
ոչ այլ ինչ ենք քան երազանք հորիզոնի մի վայրում
կյանքի ժանյակ քմահաճ ու ծածանվող
երազի մեջ կորսված դեմքի մի ցոլանք –
մենք դա գիտենք բայց չգիտենք
թե ինչ իմաստ ունի այն

ԴՎԵՅՐԱ [1] (ԳՈԶՈ)[2]

4.1.17

մի ժամանակ այն ինձ համար ակնածալի վայր էր.
Գեներալի ժայռը անվրդով խոյացած, աղի տարիներից
շերտավորված բրածոն՝ նման նախնիների ատամների
պաշտպանում է այն. ես լսում էի ծովահարսերին՝
կախարդական
պատուհանից քամու հետ փսփսացող
որ բացվում էր դեպի
մեր ծովը՝ անհատակ ավազանը
որ ներհոսվել է ժայռի բերանից

բայց երբ տարիներ անց դյուքանքն այդ ճանկեցին
աղյուսներն ու մարդիկ, ես կարծես զգում էի ինչպես են
կոկորդիս մեջ նախնյաց լեզուները կծկվում հանց
Դվեյրայի
ներքնածովից ելած կախարդական օձեր
ֆշշալով ամեն սրբապղծության վրա հորդորելով ինձ
չայցելել վայրն այդ, չայցելել բայց հավետ
տեղավորել այն
իմ մտքի մեջ՝ լերկ ու լքված ինչպես ի սկզբանե
գիտեի Նրան
.....

1. Դվեյրա – փեսարժան վայր Գոզոյում
2. Գոզո – կղզի Մալթայում

(8.3.17)
բայց ի՞նչ արժե բնապատկերը երբ սրբությունները
կողոպտվում են հիշողությունից անպաշտպան
պատմությունից և հարպիաների
ջերմագին համբույրից.
միայն Բնությունն է պնդում իրենը. այսօր Դվեյրայի
ալիքները կուլ տվին նրա դարավոր պատուհանը
ամբողջովին և ես լսում եմ լոկ քամու ճիչը
որ ծաղրում է հիմար երազողին ով փորձում է
ժամանակից անվնաս պահպանել մանկությունը

ՎԱՂԱՆՑՈՒԿ ՊԱՀ

ուսերիս գցած կապույտ-կանաչ շալը
գործված է ջրից
ոտնամատներիս տակ պարող ծովի ջրիմուռը
ասես ջրահարսի վարսազարդ լինի

սիրո հետագիծը ձգվում է օդում այնպես նրբորեն
ինչպես
ի պատասխան շշուկն իմ
տեղավորվում է կատարյալ աշխարհում ժանյակի պես
որին դեռ մարդը ձեռք չի տվել

ԿՐԱՔԱՐ

այս քարի մեջ առանձնահատուկ ոչինչ չկա
բացի քո հայացքից՝ ուղիղ նրա վրա, այս արևազօծ
քարի
միջերկրածովյան պատի մեջ՝ կտրված մեղրից

ուշ կեսօր է շոգը թափառում է գեր գյուղացու պես՝
թաթախված գինու մեջ, ծանր ու ծույլ չափազանց ծանր
ինքն իրեն բարձրացնելու համար, հողը վաղուց է
ներծծել
անձրևի վերջին կաթիլը, չորացած դաշտերն այժմ
ոսկեզօծ են
քո հայացքը նույնպես ոսկեզօծվել է. արևը և դու
կսուզվեք կարմիր հորիզոնի մեջ, գիշերը քուն կմտնեք

բայց կպահես շունչդ միառժամանակ
վաղն արևը կրկին կծագի երկուսիդ համար

ԿԱՄԵՈՆԵՐ*

** Կամեո - կինոյում, թատերական ներկայացման մեջ, տեսախաղում հայտնի անձի՝ ռեժիսորի, դերասանի, քաղաքական գործչի և այլն էպիզոդիկ հայտնվելը:*

ԻՆՔՆՈՒԹՅՈՒՆ

ԱԼԵՔՍ / ԳՎԵՆ
նա դաշնամուր է նվագում
վրձնահարում Նրա աչքերը երաժշտությամբ
և Նա դիմում է նկարչության

ԳԼԵՆ
նման է գուշակի
տեսլականը բռնցքամարտիկի բռունցքն է
յուրաքանչյուր բառը՝ փետուր

ՆՈՐԲԵՐՏ
ես լուսանկարեցի քեզ հետո
որպես միտք ճամփեցի քեզ նավարկելու
վարդագույն-կարմիր նավակով

ԻՄ ԸՆՏԱՆԻՔԸ
մի ժամանակ կատարյալ ակորդ
այժմ նվագում է ծեր վարպետը
Պարկինսոն ազգանունով

ՖԵՄԻՆԻՍՏՆԵՐ
կանայք որ կոչված են
մերկացնելու մեր ոտքերի միջև
վերքեր ի հայտ բերող հրամանագրերը

ՃԱԿԱՏԱԳՐԻ ԿԻՆԸ
նա հետ է նայում սգալով
անմեղ երեխաների մահվան համար
նա է իրական աղը երկրի

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ամուսնացիր ինձ հետ՝ ասաց նա
սիրով շոյելով կնոջ նուրբ սպիտակ պարանոցը
իսկ հետո կտրեց նրա գլուխը

ականջ փակելով իրենց ուխտի հանդեպ
առնելով հոտը հաղթանակի
նա փակեց նաև աչքերը

ամսաթիվ հիշել
բազմամյա ծաղրի մեջ
գրոշներ՝ տղայի համար

նա հանգիստ ընդդիմացավ
հպարտ ջենթլմենական կեցվածքին
սատիագրահայով*

կրճատված պատմություն
երկդիմի քաղաքականություն
հին պատմություններ դասագրքերում

այնտեղ՝ Երկրագնդում
նրա ստեղծած խոսքերով
ամբողջ աշխարհն իր բեմն է

անտարբեր լինել թագավորական
իշխանության և զբոսաշրջության հանդեպ
նշմարվում է Նրա սպիտակ աշտարակը

---

* *սատիագրահա – Հնդկաստանում, 20-րդ դարի սկզբին՝ բրիտանական գաղութատիրության ժամանակաշրջանում, Մահաթմա Գանդիի կողմից մշակված՝ անկախության համար ոչ բռնի պայքարի մարտավարության երկու չև՝ չհամագործակցություն և քաղաքացիական անհնազանդություն:*

ԶԱՆԱԶԱՆ

մանկական հիշողություններ
կանաչ հուլունքներով շղթայածև վզնոցներ
սոճու ծառերի բուրմունք

մի անգամ հին զգեստապահարանից
անզգուշորեն հագած ու
ցուցադրած պչրուն կարմիր զգեստ

փոքրիկ լերկ նուշի ծառ
ուշ հունվարի գալուստ
ամաչկոտ հարսանքի ծաղկաբույլ

կրկին ու կրկին
մեզ հրապուրում է տարածել
Բնության մթագնած հրապույրը

Տոհմածառից թափվում են
վերջին աշնանային տերևները
միայնակ տարվա եղանակ

նրա սառն աչքերն իմ աչքերի մեջ
փշրված ցրտահարված արցունքներ
սիրո կործանված ծաղիկներ

ոչինչ չակնկալել
քո ուսին՝ մոխրի հետքը
իմ անբառ սիրո երգը

երեկոյան կաթիլներ խոնավ
բարձրաձայն տկտկացող հին ժամացույց
խշրտացող սեփական ոսկորներ

ճանճի պես չեմ կարող
հասկանալ լուսամուտի ապակուն
իմ ու երկնքի միջև

մտքերը խառնվել ու պատառոտվել են
բոլորը հոգատար ձգվում են դեպի սիրտն իրենց
խմորը գրտնակված է չափազանց բարակ

ոսկե այծի խոպոպած կարագ
քսած՝ սնձան չպարունակող հացին
վերջին նորաձևությունը

անհողմ սենյակում
նա շաղ է տալիս պարող ստվերներ
դանդաղ մարող հուր

Երկիրը խեղդում է իր երեխաներին
իր իսկ հոգնատանջ արգանդի ներսում
Միջերկրականում

հոքուները չափազանց կարճ են
պատմելու ինչ նողկանք եմ զգում
մարդկության մասին մտածելիս

հիդրաների բերաններում ոլորված
պոչերը անողոք մտրակում են մեզ
մեր կասկածներն ու հարցերը

անվերջ անտարբեր
միաձուլվելով մեր պատմությանը
ամպերը ձևավորվում ու անհետանում են

ծաղրանք իմ գլխում
ոգեշնչման կարիք
սիրամարգի ճիչ

ՀԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ / ՆՈՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՄՏՔԻ ԱՅԼ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ

ԲԱԺԻՆ

«Տունն այն տեղն է, որտեղից սկսվում է կյանքը: Որքան մեծանում ենք, աշխարհն այնքան օտարանում է, մահացած ու կենդանի մարդկանց օրինաչափությունն՝ ավելի բարդանում»:

- «Արևելյան Կոկեր», Չորս քառատող, Թ.Ս. Էլիոթ

Հազիվ թե կյանք՝ հանուն տեսիլքի,
շնորհների ցրում,
մտքի բաժանում՝ հաճախ անըմբռնելի:
Ես ճամփորդել եմ միայն պատերից ներս
և ոչ միշտ՝ այնտեղ կամ այստեղ:

Քանի կարժ է դեռ մնացել որով պետք է աշխատենք
թեև օրինաչափությունն ավելի է բարդանում
մեր մեծանալու հետ,- որքան նեղանում է տարածքն այս
այնքան մենք կծկվում ենք և քանդում թելերը որով
պետք է աշխատենք:

Ես կարող եմ համարել սա լաբիրինթոս կամ Արախնե
ով մահացու զենք բարձրացրեց Աթենասի դեմ և,
չափազանց վստահելով գիտելիքներին իր, անտեսեց
աստվածների շնորհները կրելով
Աստծո գիտակցության ծանրությունը:

Իսկ ես մտածում եմ խխունջի մասին,
որ իր ճանապարհը

իր տան տակ է հարթում՝ ստեղծելով մի ուղի
բարձր խոտերով, իր հետևից թողնելով երկար
թել. այն թելերի պես որոնցով ես հյուսում եմ
իմ սեփական Բյուզանդիան և ոչ թե երգերով
պաշտպանելով մարմինս իմ կղզիացած տանը

դանդաղ թաքնվելով անտես պատյանի մեջ
լսելով ճամփորդների արձագանքները

ՍԱՀՄԱՆ

Երբ ես տեսնում եմ որ դու սավառնում ես
աշխարհից հեռու աշխարհի վրայով.

երբ մենք փորձում ենք հասնելու իրար,
մեր պարզ ձայները
նմանվում են քո առագաստի մեջ ճչացող քամու:

Կոլումբոսը երբեք չի ճամփորդել, Գալիլեյը տեղին
դատապարտվեց
Կոպեռնիկոսը Պտղեմեոսի մեծագույն երկրպագուն էր
և քանի որ մենք ստեղծել ենք հատու-կտրական բառեր
և վառել այն բոլոր ասպարեզները որ կարող էին
մերը լինել

ես տեսնում եմ՝ ահա դու նավարկում ես ծովից հեռու
կամ սավառնում մի այլ աշխարհի վրայով

ՈՒԶՈՒՄ ԵՄ, ՈՒԶՈՒՄ ԵՄ
(Ռոբերտին)

դու հարցրեցիր՝ արդյո՞ք
կարող եմ մերժվել

հայացքն այն որով նայեցի քեզ
պետք է բավարար լիներ սակայն
կարծես հարկ էր քեզ դեռ ապացուցել

իհարկե
ես ծիծաղեցի

լուսինն այդ գիշեր շատ մոտ էր փայլում
ես կարծում էի որ Բլեյքի աստիճանները
զուտ բառեր են

ԾԻԾԵՌՆԱԿ ՓՈՔՐԻԿ ԾԻԾԵՌՆԱԿ

(Երջանիկ արքայազնը՝ Օսկար Ուայլդ)

մի օր Երջանիկ արքայազնն իջավ
և քաղաքում գտավ իր միակ ուղին

բայց անզորացավ գտնել ինձ այնտեղ
ուր ես դառնացած պառկած էի երկար

ուստի խնդրեցի՝ և թռավ-եկավ նրա ծիծեռնակը
իմ սիրտը հանելու
և ինձ շնորհելու երանելի հանգիստ

«Ա»
(Փեմին)

դու հիշեցնում ես մեկին
աճող կորսված այգում

որտեղ կար չկար մի արքայադուստր կար
ով քնեց ու երազում հավանաբար տեսավ
որ բանաստեղծները թունավոր ծառեր են աճեցնում
ոսոխին գետնին տապալելու համար

պատվաստված հեքիաթների քաղցր պտուղներն ու
աստվածային ձայները արմատ-ճյուղերով
ամբողջովին ներս սողոսկելուց հետո
ծնում են նոր բառեր ու աշխարհներ նոր

ամեն անգամ «ա»՝ «արքայախնձոր» ասելով
բերանդ լցվում է ջրիկ ցանկությամբ՝ համտեսելու այն

ԾԱԳՈՒՄ

վերադարձրու ինձ ապակե իմ աշխարհը
իմ բյուրեղյա գնդակը որով խաղում էր Պանդորան
մինչև խնձորի անկումն ու անձրևը
Շրյոդինգերը* սկսեց երբ նա իր կատուն
տեղավորեց կրկին արկղի մեջ

վերադարձրու ինձ ջրհեղեղից առաջ եղած օրերը
որ կարողանամ խեղդել այդ խորամանկ օձին
և կանգնեցնեմ Կայենին՝ արյուն չթափի և Աբելին
որ շեղվածի պես բռնազբոսիկ ծիծաղում էր
մինչդեռ բոլորը
նրանց քույրերն ու եղբայրները շարունակում էին
ապրել իսկ Ադամը շուրջն իր նոր կին էր փնտրում

իսկ որտե՞ղ էր գրողը տանի Եվան այն ժամանակ.
հավանաբար փորձում էր գլուխ հանել թզենու
տերևներից որ ստիպված էր լվանալ՝ անիծելով
իր իսկ ծնունդը և բոլոր տղամարդկանց

** Էրվին Ռուդոլֆ Ջոզեֆ Ալեքսանդր Շրյոդինգեր - ավստրիացի ֆիզիկոս, քվանտային մեխանիկայի ստեղծողներից: Նոբելյան մրցանակի դափնեկիր (1933):*

ԲԱԶՄԱՆՇԱՆԱԿ

կա մի տեղ որտեղ խնձորներ են աճում
օձերը գալիս են երբ հրեշտակներն են գնում
որտեղ կարող ես խաղալ անարգել
և ծեգից-ծեգ ուտել քնել սիրահետել

մի տեղ կա որտեղ խնձորներ են աճել
ես կծել եմ մեկից հետո քեզ փոխանցել.
ինչ գորշ աշխարհի կարող էինք բախվել
առանց այդ առաջին նուրբ ճաշակի

ՈՒՐԻՇ ՀԵՔԻԱԹ

Նա ծիծաղում է Ադամի ու Եվայի վրա որոնց
տերևները թափահարվում են
անհեթեթորեն
իսկ օձը նրան դուր է գալիս
նա լուսավորում է
հիմա ես կբացատրեմ. կար-չկար մի լույսի իշխան
մի հրեշտակ ով սիրել չգիտեր
արդյո՞ք նա կսովորի սիրել վերջում,
նա մռայլվում է երբ ես ասում եմ «չգիտեմ»:
Նրան գազանները
առավելս են հրապուրում: Նա շատ բարի էր
և մի համբույրը
նրան նորից չքնաղ արքայազն դարձրեց: Ահա *ճիշտ*
ճանապարհը: Նա հաստատակամ գիտե այդ մասին:
Զարմանալի է՝ մի՞թե Արարչագործությունը
շրջվում է ետ. Նրա սև անցքերը կուլ են տալիս
մեր հողը և ագահորեն կրծում մեր մտքի բոլոր
մշուշոտ շավիղները, երբևէ աղավաղված
էվոլյուցիան անսեր Լյուցիֆերի պես
կատաղած կանգնում է մեր դիմաց
Բայց նա մատնացույց է անում խնձորը,
շրջվում դեպի ինձ՝
այն կարող էր սկսվել նաև վարդերից
որպես պատմություն
Գեղեցիկի մասին: Կամ՝ իմ անվան:
Եվ քմծիծաղում է:

ՋԻԼ

երեխաների պես մենք էլ ենք խաղացել ջրով կրելով
դույլեր ջրի տակ թաղել մեր աճեցրած մոլախոտերը

մագլցել պատերը գողացել մրգեր ուրախ-զվարթագին
ցած գլորվել բլուրն ի վար տեսադաշտում
չհայտնվելու համար

հետո միմյանց հետ մեծ խարույկի շուրջ
մենք պատրաստ էինք շուռ տալ աշխարհը

առանց կանոնների ազատ գործելու մեր իրավունքով,
քաղցած հավասար կրքով արարվեց
մեր երիտասարդությունը

այժմ հոգնել եմ զօր ու գիշեր վիճելուց քանզի
դու ավելին ես ուզում քան մեր հայրենի տունը

լավ, ես կմնամ այս բլրի վրա որին պատկանում ենք
խոտը ատամներով բռնած - երազում էի այլ կյանք
հեռվում

դու շուռ ու մուռ ես գալիս, գնում առաջ, ես չեմ բողոքի
իսկ քեզնից հետո՝ էլ ոչինչ ոչինչ չեմ անի

ՋԵՐՈՒԾԱ

ուշադրություն մի դարձրու
դա պարզապես դաշնամուրիս հեգնանքն է
քամին ում նա հետապնդում է
այս գիշեր դու ես որ ինձ կպահես
քո փափուկ անկողնում

նա քաջ ծանոթ է իմ բույրին և
ինձ ծեծելու պատճառ է փնտրում
սեղմում եմ ազդրերս դիմակայելու
նրա հարվածներին ու բռնավարքին.
նա պետք էր ավելի շուտ վերադառնար

թույլ տուր խառնեմ մազերդ
մարմինս քեզ սեղմիր ամուր
սա մեր առաջին գիշերն է
լսիր ինչպես է ողբում քամին

ՋՈՒԼԻԵՏ

եթե միայն Ֆրա Լորենցոն կորցներ բջջայինը
կամ ուշանար ավտոբուսից կամ նույնիսկ մինչ այդ
սիրո լուսե թևերը շխկշխկացնեին իմ պատի ետևում
կամ Ռոմեոն սպանվեր Տիբալտի կողմից
պարահանդեսում
կամ զմայլվեր այնտեղ մեկ ուրիշից
(և լուսնով երդում տար ըստ սովորության)

ես այսօր կազատվեի առօրյա ձանձրույթից
ուրախությամբ ընդունելով կործանման առավել
գունագեղ ձևեր

ՑՈՒՑԱՊԱՍՏԱՌ

դիմացի տանիքին մի կին ու տղամարդ
պաստառներ են ծալում՝
փայլուն ինչպես նոր տեխնոլոգիայով տպված որոշ
գովազդներում

տղամարդը մեջքով դեպի ինձ, կինը ծիծաղկոտ
դեմքով՝ պարում են վերևում
միմյանց փարված՝ թրթռուն ժապավենների պես
նրանց շարժ ու ձևերը հիշեցնում են միջնադարյան
ավանդույթները -
տանում են դեպի հեռու, և հեռվին մերձենալով՝
նրանց տեմպն արագանում է, կնոջ մազերը ծեծում են
մեջքը,
նրանց հանդիպումը շնորհվում է պտույտներով

և վերջապես նրանք ծնկեծունկ համբուրվում են,
նրանց միջև
մի պաստառ սպասում է բացվելուն, իսկ հետո
թեքվելով, ճմրթվելով ու ենթարկվելով նրանց
այն կեղտոտվում է ծայրեծայր

ԱՅՆՏԵՂ՝ ՎԵՐԵՎՈՒՄ

1.
երբ հրեշտակները հոգնում են թևածելուց
(հրեշտակները նույնպես քմահաճույքներ ունեն)
նրանք բարձրացնում են մետաքսե շղարշները սահելու
այն երկինքն ի վար որտեղ նրանք փայլում են
և ես հիշում եմ արտահայտությունը՝
նավարկել սլացող աստղի վրա...

2.
այդ երկինքը վերևում, մի՞թե չգիտես դրա մասին
այն իրականում կապույտ չէ. ալիքի արտացո-
լանքն է նման տպավորություն թողնում
այնպես ինչպես մեր երկուսի միջև
և քանի դեռ մենք պտտվում ենք արևի շուրջ
ես գիտեմ նաև գիշերամուտի մասին

3.
մենք ամպերի ձևերից ենք իմանում ստույգ
մեր երևակայական վայրի մասին
մինչ նրանք չեն քշվել միացել ձուլվել
և միայն անձրև մատուցել մեզ

ԾԻԱԾԱՆԻ ՎՐԱՅՈՎ

(Ելենա Է. Գիորգիի երկու նկարով ոգեշնչված)

եթե տկտկացնես նրա վերևում, ի՞նչ կլսի նա,
արցունքները
կլինեին չափազանց տաղտկալի. դարձրու դրանք
ոսկե թերթիկներ
որոնք կընկնեին նրա ձեռքին պահված ցողունի վրա,
վերածիր
ցուրտ մշուշապատ արևը ծաղկի

ավելի հեշտ է փակ աչքերով ցնցուղել նրա աշխարհը
վառ գույներով ճախրել ետնաբեմում շարունակելով
կամարապատել կարոտը երկնքում՝ ներքևում փռված
գունատ երկրից վեր՝ շատ բարձր ու բարձր

բայց ի՞նչ կլինի եթե թռիչքը հարկադրի նրան մոռանալ
հաճույքները՝ գարնանային նրբերանգներ վտակներ
ամառային
աշխույժ գունախաղեր աշնանային բրոնզյա
տերևներ ցրտահարված
ծառերի տակ. իսկ մի՞թե ծիածանը չէ նրա աչքերի
հետ խաղում

այն ինչ իսկապես նա պետք է տեսնի նա տեսնում է երբ
աչքերը լայն բացում է ինչպես ձմռան տեղատարափն է
ջրում
ամենքին ամեն ինչ ինչպես անձրևանոցն է
վերածվում հովանոցի

GEMÜTLICH[1]
(Այլինին)

Լեդերհոզեյով[2] ինչ-որ կերպ բարձրանալով սարը
նա նստեց ծառի կոճղին՝ այնքան կոշտ ու կոպիտ
որքան մեզ ցնցեց հանկարծակի «սուրճով»

մյուսները քրքջում են և շարունակում ելնել
մատներով խփելով իրենց գլխներին համոզելով ինձ.
չգիտեմ ինչու բայց ես մնացի նրանց արշավում

եթե կայծակը խփեր գիշերվա կեսին
որոտը կարթնացներ ստվերները՝ խոթելու աչքերս
արդյո՞ք ստվերները կվախեցնեին ինձ

չնայած նշմարում եմ պարզ առկայծումը ծառերի միջև
ես մոտակա տնակից վերցնում եմ լամպը որ
օգնում է հեռու մնալ մտավախությունից

մենք չենք կրկնում, ես ներշնչում եմ, նա ներշնչում է, մենք
արտաշնչում ենք, նա յոդլ[3] է երգում, ես բղավում եմ, մենք
ծիծաղում ենք այնուհետև աստիճանաբար
հեռացնում երեկոն

քնել առանց խոսքի, լռության ու աստղերի հետ,
արթնանալ լուսաբացին զեփյուռի գեղգեղանքից
գավաթում պատրաստված սուրճի բույրից

1.gemütlich /գեր./ -հարմարավետ

2.լեդերհոզե - կաշվե տաբատ, բավարացիների ազգային հագուստ

3. յոդլ - տարբեր ժողովուրդների մշակույթներում յուրահատուկ երգի տեսակ առանց բառերի

ՍՐԲԱՊՂԾՈՒԹՅՈՒՆ

Նրա քարոզից քսան րոպե անց սկսում եմ հազալ:
Իսկական հազ. թուքը կոկորդիս մեջ թափանցելու
իր յուրահատուկ ձևն ունի, առանց իմ
գիտության՝ ինչպես. կարո՞ղ է՝ մաղձ է:

Նա խոժոռվում է իսկույն ինձ տեսնելով՝ ավելացնելով ու
բազմապատկելով համեստ կանանց գովեստը, ովքեր
մեծ գոհունակությամբ ձգտում են մեծ ընտանիք
ունենալ՝ երախտագիտությամբ սպասելով հոգնած
ամուսինների աշխատանքից տունդարձի ժամին: Մի՞թե
դրա համար չէր Աստված ստեղծել կնոջը: Տրանսեպտի*
միանձնուհիները նստած են կրակխառնիչի դիմաց:

Նա ուղղակի մռայլվում է, երբ կես ժամից հետո
շփոթված մայրերը
կորցնում են քայլել սովորող երեխաների
վերահսկողությունը
և խոսում բարձր կարգապահության մասին.
անկարգության մեջ՝
զգուշություն ընդդեմ ներողամտության: Օրինակելի
պատանիները
քայլում են խոնարհած գլուխներով՝ բարեպաշտորեն
հայացքներ նետելով
բջջային հեռախոսներին: Ես նույնպես գլուխս
խոնարհում եմ
և հազում

և հազում, հազում և շարունակում հազալ
այնքան երկար,
որ ստիպված դուրս եմ գալիս եկեղեցուց:

---

* *տրանսեպտ - բազիլիկ և խաչաձև հատակագծով տաճարների լայնական նավ*

ՀԱՐՑՆԵԼՈՎ ԻՐ ՈՐԴՈՒՆ
(ԳԵԹՍԵՄԵՆԻ ԱՅԳԻ)

Ինչպե՞ս էր դրսում միայնակ լինելը,
մինչ քո ընկերները քնում էին, իսկ դու
թիկունքի կարիք ունեիր: «Իսկ դու որտե՞ղ էիր,-
հավանաբար կհարցնեիր ինձ,- երբ ես
քո կարիքը կրկին ունեի: Դու փնտրե՞լ ես
ինձ այգում»: Կարող է ես նույնիսկ հոգնել
էի քայլերիդ հետևելուց: Կարող է՝ ես
նույնիսկ հանգստի կարիք ունեի:

Դու հավանաբար պիտի հասկանաս
իմ սիրո բնույթը լոկ այն ժամանակ, երբ
թափես այն արյունը, որ ես էի մի օր քեզ ընծայել:
Գուցե գիտակցես հանկարծ, որ ես երկար
գիշերներ քեզ էի սպասել, ես հանուն քեզ
կհրաժարվեի կյանքիցս: Գուցե այդ պատճառով
էր միայնությունը շուրթերիցդ ցատկում.
«կարո՞ղ էիր չքնել գոնե մի ժամ»:

Գուցե. կամ գուցե՝ ոչ: Ի՞նչ նշանակություն կարող էր
հիմա դա ունենալ ինձ կամ քեզ համար: Կամ կարո՞ղ էիր
մխիթարվել ինքդ քեզ համար քո իսկ հորինած
հուսահատության
զգացումից: Հիմարություն կլիներ, եթե տարվեի
մոլուցքով՝ ոչնչացնել ամենը, ինչը կնշանակի խնայել:
Եթե

դու մահացած ես, ես մեղադրում եմ քեզ: Քանզի ես
մեղադրում եմ բոլոր այն մարդկանց,
ովքեր հեշտությամբ
ընդօրինակում են և խեղաթյուրում կյանքի հնարները,

բայց մեծամասամբ մեղադրում եմ ինձ նման կանանց,
ովքեր գլուխները կախ են գցում

ՀԱՅՐԸ

Հայրն այն մարդն է ով բանկում փող ունի
Հայրն այն միակն է ում պետք է երախտապարտ լինել
ակնկալելի է երբ մայրը հագցնում ու կերակրում է ինձ
բայց ես պետք է իմ Հոր նման լինեմ եթե ուզում եմ
լինել հարգված

մայրն այն կինն է ով ունի հոգնած դեմք
մայրն այն մարդն է ով գիտե իր տեղը
մայրն այն մեկն է ով գիշերները լաց է լինում
և պարզապես մայրն այն կինն է ով միշտ սխալ է

Հայրն այն մարդն է ով ունի հզոր բարձրագոչ ձայն
Հայրն այն միակն է ով հասկանում է մեզ՝
զավակներիս
Հայրն այն մեկն է ու եզակին որ կցանկանայի լինել
ես պետք է լինեմ Հորս նման որ իմ Հայրն իրոք սիրի ինձ

ԽՈՍՔԵՐ

ՔԱՂՑՐ ԲԱՄԲԱԿ

բառերն այս որոնք առանց պատճառի ծագում են հիմա
չգիտեմ՝ ուզու՞մ են որ ես գրի առնեմ
թե՞ բարբառում են նրանք անշշուկ
ինչպես քաղցր բամբակ

կպչում են շուրթերիս
միակցվում իրար
ձևանում տեղին նախադասություններ
և շարժվում առաջ
մնալու համար

ՁԳՄԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

ձգելու մեջ էլ կա ինչ-որ հարգալից բան
իրարանցում՝ ձգվող դեպի քեզ
բռնակ՝ քո ձեռքերի մեջ
մի դարակ լի խզբզոց
անխոս աղմուկ
աղաղակ

ինչ ֆգելու ցանկությունը քո հայացքում
ստիպում է ինձ գրոհել մատներդ
չնայած համոզիչ բառերը
ճանաչում են նրանց
բռնակի մոտ

ոչ մի կերպ չես հավատում որ
հնարավոր է հակադրվել
ձգման վերահսկողության
բռնությանն այս

ԼԱԶԱՆՅԱ*
(Նիկոլասին)

լազանյա ուտելիս բանաստեղծության
համ ես զգում (եթե երկուսի համն էլ ծանոթ է).
բարդ շերտերը գունագեղության խաղը
բաղադրիչների բուրմունքը խառնածին
կարող են զարմացնել և օժտել կարողությամբ որ
կծելուց հետո այդ ամենը պետք է ի մի բերել և
ուտել զմայլուն ու կիսափակ աչքերով…
ներդաշնակության էության ու արարման հաճույք.
բանաստեղծն ու խոհարարը հիանալի
ներդաշնակված են՝ սիմֆոնիա
որ սահման չի ճանաչում սավառնելով վերին
ոլորտներով.
իսկապես եթե հանես բառերը (առանց
որոնց բանաստեղծն անխոս է) լազանյա ուտելը
նման է պարզապես լար զարկելուն

---

* *լազանյա - քառակուսի կամ ուղղանկյուն մակարոնեղենից պատրաստված իտալական ուրեստ՝ լցոնված բեշամել սոուսով, լազանյայի խմորե թերթիկներով ու պարմեզան պանրով:*

ՄԱՐԳԱՐԻՏ

դրանք այն մարգարիտներն են, որոնք նրա աչքերն էին
(Փոթորիկ, Վիլյամ Շեքսպիր / Ամայի Երկիր, Թ. Ս. Էլիոթ)

այս միտքը փոքրիկ մի լաստ է
որ անհանգիստ ճոճվում է
իմ մտքի ալեծածան
ջրերի վրա

որ հանգրվան է փնտրում
խաղաղ մի տեղ
որտեղ կարելի է հանգիստ լողալ
իմ ժպիտի ներքո

թեև ոչ իմ պատկերացրած
ձևով ու հմայքով -
ինձնից բացի բալորը կարող են
դա արժեք կոչել

բայց հազվադեպ բան է երբ մարգարիտը
դուրս է հասանելիությունից
որքան էլ խորը սուզվեմ
իմ աչքերի մեջ

ՍԱԼՈՐՆԵՐ

հունիսյան սալորների պես
քեզ մատուցած
բառերը նրա

գորշ ու կտրուկ
և կլեպով և կորիզով
խայթում են քո լեզուն

իսկ սալորի մարմինը համեղ է անչափ
քանզի մի պտուղ է նա
որի մեջ կարող ես թաքցնել ատամներդ

ՍԵԶՈՆԱՅԻՆ

երբ ես քեզ տեսա վերջին անգամ
տարվա եղանակի տերևները
փոքրիկ լեզուների պես ոսկեզօծ էին

իսկ իմ աշխարհը նրանց վերաձայնած
պատմությունն էր

երբ ես քեզ տեսա վերջին անգամ
քո բերանը լի էր
մանկական հեքիաթներով

բայց տերևները թափվում են երեխաները հեռանում են
հեքիաթներն ավարտվում են անդարձորեն

ոտքերիս տակ տերևների
խշխշոցն այժմ արձագանքում է
և սպասում ձյան

ՍԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐ

ԱՆԳՂ

հիշու՞մ եք սուդանցի այն երեխայի նկարը որ
պայքարում էր հանուն կյանքի՝ անգղը թիկունքում
հիշու՞մ եք՝ Քարտերը* ոնց մրցանակ շահեց
այդ նկարի համար ապա վերջ տվեց կյանքին
դրանից հետո:

գուցե մեր կյանքի ինչ-որ պահի
բոլորս այդ աղջիկն ենք կամ բոլորս այդ անգղը
բայց թերևս լոկ նրանք ովքեր մաքառում են
գիտեն՝ ինչ հուշեր են թաքնված
մեր ծիծաղի տակ:

** Քեվին Քարթերի՝ սովալլուկ երեխայի՝ անգղի հեւրապնդումից փախչող հուզիչ լուսանկարը 1993 թ., Սուդանի սովի ժամանակ, որ շահել է Պուլիտցերյան մրցանակ: Չորս ամիս անց՝ 1994թ., նա ինքնասպան եղավ:*

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

դուք մտածո՞ւմ եք տեղի ունեցող մեծ
հեղեղումների մասին, օրինակ
հիշենք Կատրինան* որ խորտակել է
մեր հեռուստատեսությունը և ինչպես
հարմար էր այն ժամանակ՝ խաչակնքել ենք
(նույնիսկ ես)
աղոթել մահացածների համար և ասել՝
Աստծո կամքն էր

տարերքի մոլեգնության բացարձակ անտեսումը
սակայն
ինձ շշմեցրել էր. կլիմայի փոփոխությունը
կեղծ սպառնալիք է՝
կասեիք դուք, մարդիկ բլոկբաստերներ կպատրաստեն
դրանից մի օր և կապացուցեն որ վախս անհիմն է

տարիներն անցնում են, նայեք մեզ հիմա.
օդը պղծված, հրդեհները գրոհի են ելել
կատաղի երկրաշարժեր ցամաքում ու ծովում
զոհերի թիվն անթիվ-անհամար

---

* *«Կատրինա» փոթորիկ՝ 2005 թ., 1245 զոհ*

ԿԱԽԱՐԴՎԱԾ
(միջերկրածովյան 2015)

մենք ստուգում ենք ալիք առ ալիք՝ նավաբեռի համար
մատնանշելով յուրաքանչյուրի վարքը

մեր երեխաները ճողփում են ջրերում և
հավաքում ողորկ խճաքարեր
նավերը նավարկում են մեր շշուկների վրա

նրանց համար լավ է որ մենք ասում ենք
նրանց չիմացածը

գիշերով ստվերները չխկչխկացնում են
մեր պատուհանները
նվնվում վարագույրների մոտ
տենչում մեր մահճակալները

դա պարզապես քամին է՝ ասում ենք մենք

ՏԵՂԱՀԱՆՎԱԾ

ես կարդացել եմ՝ ով էիր դու դեմքիդ այլայլվածքի մեջ
առաջին անգամ երբ քեզ տեսա, դու Ամուրի պես
հոսում էիր
քո աչքերի ետևում՝ չափելով յուրաքանչյուր քայլը
ինչ-որ մեկը դա փոփոխություն էր կոչում

քո սեղմած բռունցքից ես հասկացա՝ դու ճանկռտելով
անցնում ես
պատմության միջով, սաղրելով զգուշությամբ
ոչ փոփոխելով այլ՝ փոփոխված

ՓՐԿՎԱԾԸ
(Մարսա)

տեսնում եմ ինչպես են նրանք անցնում շրջանցիկ
ճանապարհը
աշխատանք ստանալու հույսը սրտերում՝
նրանք վաստակում են
սև հայացքներ միայն, ոչ մի վարորդ կանգ չի առնում

ուստի քարշ գալով նրանք հաջորդ օրը
վերադառնում են ճամբար՝ դժոխքի հերթական արար-
նրանք չէին սակարկել

խռովության հետագա բռնկումը
խառնելով իրենց առանց այն էլ
խճճված մտքերը

Երաշխիքն իմ սպիտակության մեջ է, ես լսում եմ
նրանց լուռ անեծքն առ անգութ գոյատևումն այս
որն այստեղ հարվածեց նրանց.

ես ամաչում եմ որ դեռ ոչինչ չունեմ նրանց
առաջարկելու բացի վշտից որ բերում եմ
ինձ հետ իմ իսկ մարմնի և արյան համար

գերեզմանոցի դարպասի մոտ մեկը
վայրի ծաղիկներ է վաճառում և ես
առնում եմ մի քանիսը ժպիտ ներշնչելու համար

ՀՈՒԾԱՐՁԱՆՆԵՐ
(երկխոսություն)

Հազարամյակներ անց՝ Առաջընթաց: Պոմպեյի՝ փոշու
և մոխրի ներդրումը
պսակվեց գիպսով: Երբեմնի զարկերակային արյունը
կենսապատճենվեց
քարի մեջ: Ոչ բալզամած, ոչ քանդակված բետոնե
ուրվականները քարացրել են քեզ

և դեռ շարունակում են

Մի՞թե մահացածների նման հարությունը կենդանի
հուշարձան չէ.
արագ հանգչողները վերականգնվում են ամբողջովին.
վերահառնում են
չծերացող ծովից հյուծված գաղթականները,
նրանց վերջույթների
ծեփապատճենները ցիր ու ցան են եղել, նրանց
ցիրուցանված ոսկորները
ժխտվել են մի ողջ կյանք

դա է ճշմարտությունը

Պոմպեյի կերպարանքները անվայել կթվան լոկ
նրանց, ովքեր
պնդում են՝ խեղդվածները չպետք է վախենան
հետագա պղծումից:
Մեր պարտքն է հիշել, որ Մարդու աստվածային
իրավունքն արարչության մեջ սրբագործություն է.
այս ամենը
հաստատում են հուշարձանները

և անեզրությունը

ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՅՐԻՆԵՐ

Արդարը արմավենու պես կծաղկի,
Լիբանանի մայրու պես կաճի: - Սաղմոս 92

արդարություն
եզրույթ չկա
կա միայն հետապնդում
և մատների պրկում նրա
էներգիայի ճիրաններում՝
չտեսնելով սահման
սով ու ագահություն

ոչ մի նման բան
առանց գազանի անմեղության սպանդի
փողոտված դիակների կարմիր գետերի
գարշահոտության
և ծաղկած կակաչներից հավաքած ծաղկեփնջերի
Լիբանանի մայրիների տակ

ԹԱՂԱՄԱՍ 16

քաղաքի խորշում՝ ինչ-որ տեղ մի երեխա է հեծկլտում
ծեծված կամ գուցե պարզապես անտեսված.
նրա մայրը խեղդվել է շշի մեջ որ լեցուն էր
ժամանակի ընթացքում կուտակված վշտով. նա
հիմա խաղի էության մեջ հազիվ է նկատում

որ իր մեջ ապրում է վեց երեխաների մոր կերպարը. հիմա
բոլորը հերթով գոռում են նրա վրա մինչդեռ Թոմին
աղբարկղի մեջ գտավ մի ասեղ և բաց թողեց
իր հերթը. հինգը միանգամից այժմ գոռում են նրա վրա
բայց նա այլևս հոգ չի տանելու

ներքևում կանգնած տղամարդը նուրբ ձայն ուներ բայց
երբ ծխախոտը մարելու վրա էր նա սկսեց
հեղեղել բերանը
հայհոյանքներով, երդվում է որ ինչ-որ դեր ունի որ
նա երգել է նախկինում, ակնարկում է որ միայն
կեղծանուններով է լինում բարերում

զրո մակարդակով ծեր տիկինն իջավ որ աշխարհում
չորրորդն էր համարվում իր բարձրահունչ տեսքով. նա
խուլ է խեղճը չի լսում ինչ է կատարվում բայց
որպես հավատացյալ արտահայտվում է՝ մետաղյա
ուլունքներով տերողորմյան դրած ծնկներին

ՄԱՐԴԿԱՅԻՆ ՑԵՂ

կար-չկար ջուր կար
շատ ջուր մինչև աղավնին
տերև չբերեց տապանը Նոյի.
կար-չկար մի երկիր կար
մեծ մի երկիր որտեղ
մարդկային ցեղը թողեց իր հետքը
թարախելով ու նեխելով այն. մինչ այդ
նայենք վեր՝ երկնին (ի դեպ
աղավնին միակ հավքն էր
որ անցավ երկնքով որպես թռչուն
և չկրակեցին նրա վրա) վեր խոյացող
կառույցներից ու ծխարձակող ինքնաթիռներից
բացի ոչինչ չենք տեսնի վերևներում
գործարանները ծաղկում են
արդյունաբերությունը բուռն զարգանում
մինչ մշակույթը խռնշտվում է
անծայր ճամփաներին և մենք
շարունակում ենք մեր մրցավազքը
արագ ու վտանգալից քայլերթերով.

Իսկ ինչու՞ շտապել. մեզ ասել են որ
կարիք չկա բնավ անհանգստանալու
բյուր հանգրվաններ կան
Տիեզերքում

ՆԱՎԱԿ ԴԵՊԻ ՈՒՏՈՊԻԱ

անվանիր *Անմեղություն*
այն նավակը որ թիավարում ես
դուրս գալով խոր ծով
բայց մի՛ նայիր ներքև
օ՜ մի՛ նայիր ներքև
այն ամենին ինչ կարող է գտնվել ցածում
հորիզոնին սևեռած աչքերով
առանց թարթելու
երկու թիակներն էլ շարժվեցին
ձեռքերիդ սեղմումից.
թիավարիր ոտքիդ մատներով
նրանցով ինչ մնացել է քեզնից
քանզի խորտակվում է նավակը

ԳԵՐԵԶՄԱՆԱՔԱՐ

խնդրում եմ մի թաղեք ինձ այնտեղ որտեղ միայն
քար կա
ես արդեն կշտացել եմ դրանից սողոսկելով կառույցները
խժռելով հողատարածքները հաստատություններում
փորփրելով
ատամներ խրելով գլխների մեջ որոնք միեղջյուրների
համար
տեղ չեն թողնում.

եթե գտնվի լոկ մեկը երբ ես մեռած լինեմ խնդրում եմ քեզ
կդնես ինձ ծառի տակ փռված կանաչին և կփորձես
փրկել թռչուններին որոնք այնտեղ բնադրում են
և ինձ պես հանգստացնում թևերը և ոչ թե վանդակում
անորոշ թռչկոտում են. թարմ

կանաչը զուգավորված քարի հետ, միայն քար է
բուծում
կերակրվում անկշտությամբ լցվում շինություններով
կուլ տալով հողատարածքներ և մարսելով լոկ իր
լեզվին հաճելին: Եթե քար հայտնվի որ ես պետք է
կուլ տամ և խրվի կոկորդիս մեջ

կթաղես ինձ այնժամ երբ ես հազալով խխեմ
և վճարեմ ագահության պարտքիս դիմաց

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ՍՐԱՀ

ԳՈՒՉԻ

եթե հանդիպես ինձ ինչ-որ սոցիալական խնդրով
և վստահաբար
փոխես զրույցն ու մեղմորեն համեմված խոսես
բարձր խոհանոցի կամ
նորաձև կուրյուրների երեկույթների ընթրիքների
գեղասրահների
հայտնի մարդկանց մասին, պարզապես շաղ տալով
բամբասանքներ
օ՜ սիրելիս ես չգիտեի որ դու չգիտեիր

եթե իմ հագին չկա նորաձև հագուստ ձայնս
բարձրացված չէ
վիճաբանություններում, դիտարկումներս սթափ են
ծիծաղս չափավոր ապա դա նշանակում է որ
ես արդեն հասուն եմ. տեսնում ես այլևս ոչ շատ
կատաղում եմ ոչ շատ ազատորեն մտածում

ՏԱՐԻՔՆ ԱՌՆԵԼ

ես զգում էի որ կամաց-կամաց այն մոտենում է
ու հանկարծ այստեղ է
և ես թորշոմում եմ

շնչառությանս նվաղումից
անկման հոտ է գալիս
ականջներս ու աչքերս խեղվում են
մազերս թափվում ոսկորներս հյուծվում

բայց դեռ վերջույթներս քեզ են տենչում
այս մեռնող օրով

հիշիր երբ նույնիսկ գիշերը իջնի
իմ աճյունը շարունակելու է
շշնջալ անունդ.
դե փախիր, սեր իմ, փախիր

գուցե ես ավելի մոտենամ քեզ

ՊՈՌԹԿՈՒՄ

մահացող մի ձայն որ արձագանքում է
դեռ չասված բաներ
անկանգ թռչկոտում է գլխիդ մեջ

և արձակում է մոլախոտի դառնահամ հոտ
և առնում է մահացած բողբոջների համ
և նետում է ներփակ սերմնապատիճներ
աչքերիդ արցունքատար անոթներով:

բայց դու փոցխում ես ամբողջ մոլախոտը
չնայած դա երբեմն տարիներ է տևում
վերջապես քո լեզվով սերմեր ես ցանում
և ջրում դրանք խոր ցասումով

ետ ներքաշեք այդ մութ ձայնը կերկեր
և նետեք նիրհող աշխարհի վրա.
ինչպե՞ս կարող է այն երբևէ մարել
երբ սաստկանում է ցասումը նրա

ԱՌԱՋԻՆ ՍԵՐ

նրա թևը հարցական նշանի պես
օղակում է իրանդ

մատներդ նրա շապիկի կոճակներին՝
պատասխանում են
նրա ձեռքը քո կրծկալի ամրակին որոշում է
երկուսդ ծիծաղում եք – գործում ավելի արագ –
կապվում

դու հայտնաբերում ես քո մարմինը քանզի
նրա մատները այնտեղ են, բերանը
այստեղ, նա սրնգի պես նվագում է քեզ

դու գիշերն այդ պահում ես լեզվիդ ծայրին
ոչինչ այդքան քաղցր ու համով այլևս չի լինի

ՄԵՆԱԿԱՏԱՐՈՒՄ

ես նորից մենակատարում եմ, միայնակ
հաջողության եմ հասնում միայնակ զարթնում
եմ առանց սպասումի. իսկ ինչու՞ պետք է
փնտրեմ մեկ այլ ոք զուգերգի համար

հետևիր զուգընկերոջը իմ պարի մեջ, շունչդ պահած
սպասիր մինչ հատածները կընդարձակվեն
մենակատարումը նախատեսված չէ երկուսի համար
և երբևէ կեսից այն չի խարդախվել

ուստի ես արթնանում եմ և սուրճիս մեջ լուծում
նրա ժպիտը դասավորում հին հագուստը հրաժարվում
ամենայն զուգերգերից նետում օրագիրը ապրում
առանց երազների ու քնում առանց հուսահատության

ես ներկայացնում եմ օդը առանց շփոթության
խոնարհվում
իմ հայելու առջև և արժանանում
ծափահարությունների
այսպես ես քնում եմ արթնանում արթնանում եմ քնում
սա այն ապրելակերպն է որը ես յուրացրել եմ
լավագույնս

ՆՈՒԱՐ ՖԻԼՄ*

կինը իր մտքում դիմում է տղամարդուն և նա
իհարկե արձագանքում է. կինը բարձրացնում է հայացքը
տղամարդը բռնում է նրա ձեռքը և ոտքի կանգնեցնում
թեքում նրա կզակը լոկ իր նիհար մատով,
և նա ժպտում է

ոչ ոչ, ես դեռ եմ նեպրել անպիտան իրերը
պարիներ առաջ

իսկ հաջորդ պատկերում կինը կառչում է նրա կոճից.
գուցե նա
միտք չուներ ոտքով հարվածել պարզապես ուզում էր
ազատել
ոտքը նրա համառությունից. երբ տղամարդը կաղալով
հեռանում է
իր մաշկի հուշերը թողնում է կնոջ եղունգների տակ

թունավոր իրերը նույնպես

հիմա վերստին կյանքի ռուլետկան ուրախ պտտվում է,
կինը
խաղում է ռուսական ռուլետկա սպասում
մատնազարկին.
և այս սցենարում հայտնվում է թեթևամիտ մեկը ով
ընդմիշտ իրենն է, տղամարդ ով փոխել է անունը իր

թերևս այս անգամ ճիշտ հասկացա
սա ավելի շուտ կրկներգի է նման

---

* *Նուար - կինոմատոգրաֆիական տերմին, որը վերագրվում է 1940-1950-ականների հոլիվուդյան քրեական դրամաներին, որոնց մեջ արտահայտված է պեսիմիզմի, անհավատարմության, հուսահատության և ցինիզմի մթնոլորտը:*

ԱՆՀԱՎԱՍԱՐԱԿՇԻՌ

ահա և դու
ծեր ու խճճված
խղճուկ մեջքից կորացած
ոսկորդ մաշված
բզզոցդ հանդարտված
ուղեծիրդ
կորցրած

հիշիր որքան անհոգ էի ես այնժամ
մեր տիեզերքում
պտտվելով այնտեղ
բոլորվելով այստեղ
գալարվելով նորից
պտտվելով

այնքան մինչև որ դու կսկսեիր ճոճվել
ու օրորվել
ընկնել.
հին հիշողությունները
փոշու պես պտտվում են

ծորալով ժանգոտվելով պայքարելով քմծիծաղով
երբեմն պայթելով ինչպես բնական գազը կպայթեր
մերթընդմերթ աշխուժանալով հանց աննշան աստղ
լեզուս պապանձվել է – խանդից ու վախից խոցված
այն լոկ կարող է վիրավորել քեզ

դու պարզապես անհավասարակշիռ ծեր
մի գլուխ ես
և միայն դերվիշները կպտտվեն
քո շուրջ

ՊԱՐԱՆՈՅԱ

նրանք անկարող են հասկանալ որ նա սարսափում է
այդ խենթությունը բոլորն ատում են
նրանք չեն կարող արձակել հանգույցն այն
որ խեղդում է նրա կոկորդը
նրանք չեն կարող փորձել դա բարեգործությամբ
նրանք չեն կարող փորձել դա հույսով
նրանք չեն կարող իրենց հավատը դնել նրա մեջ
մինչ նրանք փորձում են կտրել պարանը

ԽՈՒՑ

այն մեկը ով ծածանում է իր խոսքերը
ապա դրանք անկանոն նետում վայրի բնություն
վախեցած անսպասելի անդրադարձումից
խփելով վանդակաճաղերին, շատ ուշ հասկացավ
որտեղ է

նա կրում է իմ անունը ծանրորեն, հանց
ոտքի տակի դրոշ
թրծված կեղծիքով ցավով հնազանդությամբ. տարբեր
տարիքի ու սեռի քաղբանտարկյալները հետո
հասկանում են
ինչու է պատմությունն աքսորյալների համար
կղզիներ ընտրում

ԱՐԵՎՀԱՐՈՒԹՅՈՒՆ

կինը գրում է մխացող բանաստեղծություններ
նոր կարկատաններ դնում
իր ճանճրացող ուղեղի վրա

այրվելուց մարմինդ թաքցնելու համար
մերկ պառկիր բարի արևի տակ, տղամարդու պես
մինչ օզոնային շերտը պաշտպանում է

նրա կրծքապտուկները կենդանանում են արևի տակ
տղամարդկային երևակայությամբ
այնքան ջերմ որքան հատուկ է ջերմությանը

առանց արևայրուքի
դեմ քսուքի
հանուն սիրո

ՀՈՍԱՆՔԻ ԱՆՋԱՏՈՒՄ

Այո, ես դեռ մտածում եմ քո մասին. դա սովորություն է,
որից չեմ կարող ազատվել: Ինչու՞ պետք է ցանկանամ:
Ես այնքան եմ կարոտում քո ծիծաղը, որքան
այն անմեղությունը, որ բորբոքվեց մեր
երևակայության մեջ մի ժամանակ:

Նախ, դու մեծացել ես, և դա է իրականը, դու սիրում էիր
ասել՝ դու կլինեիր իմ փարոսը, եթե ես հավատայի: Ես
վստահել եմ քո ասածներին, բնավ չիմանալով, որ
ալիքները չեն կարող սանձահարվել,
չեն կարող անփոփոխ մնալ:

Ես վստահեցի քո բոլոր ասածներին մինչև լույսը մարեց,
հոսանքն անջատվեց. պարզ իրականություն՝
բախվելով իր իսկ մասնավոր դեպքին, պարզապես
իրականությունը քարշ է տալիս գիշերն իր
օրվա միջով

DE SENECTUTE*

երբ ես բավական մեծ էի կրքի համար
փորձել եմ սիրել

երբ ես բավական մեծ էի սիրելու համար
փորձել եմ ընկերանալ

երբ ես բավական մեծ էի ընկերանալու համար
փորձել եմ պարզել՝ ինչ էի իրականում

անում այս հարթավայրում. հարթ
ինչպես միապաղաղ կյանքը
հարթ պատի վրա

* De senectute-/*լատ./-ծերություն*

ՕՐՈՐՎԵԼՈՎ

տարիները բազմում են փոշու պես
մեղմ զեփյուռը մտել է սենյակը
և այն հիմա այնքան
հարմարավետ է
ու տաք

ես հետապնդում եմ հեծյալ մի աղջկա
օրորվելով մղվելով նրա կյանքի մեջ
հետաքրքրությամբ լի
թե ինչպիսին կլինի
այն

դիտելով ինչպես են տարիները բազմում
նրա օրորվող ճոճաթոռի վրա
փոշու մի շերտ ևս
բազմել է նրա
սպասումներին

ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄՆԵՐ

ԲՆՈՒԹՅՈՒՆ ՄԱՔՐՈՂԸ

հեռու հեռավոր վայրերում որտեղ
ապրում են սիրում ու խաղում անհոգ
ես ամբողջ օրը նստում խորհում եմ
և տրվում կյանքի տաղտուկին մոլոր

ապա արտացոլքս տեսնելով ջրում
տեսնում եմ նաև այնտեղ ապագան ու կառչում նրան
կարծելով թե նա կուսուցանի մեզ բայց ես ակամա
տանում եմ նրան բռնության ճամփով

արդ երբ Բնությունը խեղանդամված է
և ժամանակն է խենթությամբ բռնված
փառատենչությունն էլ ծաղկում է մեր շուրջ
երազանքներն իմ դառնում են մշուշ

հեռու ու մոտիկ աղբանոցներ են ձգվում անընդհատ
որ քրքրում են խեղճ մակածիններ ու անտերունչներ
ամեն տարի ես պիտի ունենամ նոր երազանքներ
որոնք որ վախից իսպառ կմաքրեն այս երկիրը մեր

ՎԱԽ
(Ռ.-ին)

ալեբախվող հարթակին
մրոտ փափուկ թաթերով
փայլող կետ-բիծ աչքերով
մոխրից կերտված սև կատու

լույսի ճամփով անցնելը
մի՞շտ էր ուժիդ սահմանում
ջնջելով ողջ գույները
որ արարված են ներսում

ձեռք մեկնեցի՝ քեզ շոյեմ,
մազերիս մեջ մոլոր ձագ,
դու պատռել ես թաղանթը
չգիտեի՝ այնտեղ կաս

եթե այսօր խաղում ես
մեր նուրբ Երկիր-գնդակով
լսիր շշունջն անհունի.
«խաղալիքն այդ մեծ է շատ»

ՑԵՂ

մաշկի տակ կյանքը շարունակվում է
ինչպես միշտ արյունն ու ավիշը ոռոգում են
տարբեր օրգաններ մինչդեռ իմ սիրտը,
ծաղրելով, մղում է նրանց գործի
ակամա ու ճշգրիտ ուղղորդելով
շրջանառությունը արյան ու ավիշի

բայց օ՜ սեր իմ
իսկ որտե՞ղ ես դու

մաշկից դուրս այսօր կյանքի համար դյուրին է
պայքարել համակարգված խառնակության դեմ
հանգույցներ ստեղծել հանց լաբիրինթոս
երևակայումները ճախրում են նրանց դռների մոտ
մոխրի պես նստելով գանգի վրա որ
զենքի եռքում մնացել է մարդկային ցեղից
պատրաստ ազդանշանի

դու փախել ես, սեր,
ու հաղթել

ԽԶԲԶՈՑ

ինձ դուր է գալիս խզբզոցը
ես առանց հատուկ նախանշման
մարդ երևակայելով
այն թղթին եմ հանձնում
հետո պատռում եմ ուրվագիծը
բայց նա ետ է գալիս քիչ անց

ես այն կարմիր եմ ներկում իբրև կրակ
և կապույտ իբրև երկինք կամ ծով
հետո նրան խոտի նման կանաչ եմ ներկում
երբ նստած խմում եմ
իմ կանաչ թեյը կանաչ գավաթով

ես նրան արևի պես ոսկեգույն եմ ներկում
և արծաթագույն՝ ինչպես լուսին,
նրան ներկում եմ հանց կանթեղ
նուրբ երանգներով հետո մոխրագույն
հանց փայտածուխ

բոլոր չորս եղանակներին էլ հերթագայում են
աստղային գիշերներ ու անձրևոտ օրեր
իսկ վերացական նկարն այս ուրվագծել եմ
առավելս անգույն մինչև նա
չնկարի ինձ իր սեփական մտքի
պրիզմայով

կփորձեմ նաև կուբիզմ

ԱՓԱԳԻԾ

Տղամարդը մեջքով շրջվում է փորելու ու գտնելու որոշ բաներ
(որոնք ըստ նրա կորսվել են և նա համոզված է
որ կարող է գտնել)
չկար ոչ մի ոսկե կաքսա ավազների տակ հոսանքները
թաղել են այն հողում
խորը շատ խորը

օվկիանոսին դեմ առ դեմ կանգնած կինը ով մատի ծայրին
անշարժ պահում է անորոշ մի բան
մի թիթեռ լուսե
մինչ քամին կփոխի ուղղությունը
և թափառող ալիքները
կուլ կտան
նրան

~
ապա
երբ վերջապես քամին սկվեց
տղամարդու հողը խառնվեց ավազի հետ
իսկ կնոջ մատինը թռավ
խառնվելու ալիքներին
քշվեցին հետո ափից
հեռու շատ հեռու

մեկ այլ վայրում կարո՞ղ է նա գտնել
և հայրենի երկիր իր բերել
անսահման ծովում անհետ կորսվածը
իր ձեռքի ափում
հանց ոսկու կաթիլ

կխնայվի՞ արդյոք ժամանակի ամեն մի
վայրկյան շրջվելու մոռանալու սովորելու համար
կրկին վերադառնալու

ՊԱՏԱՍԽԱՆ
(Գարգուր)

երբ ժամանակը հարցեր է հեղում ուր միտքն անզոր է
որտեղ հայցերը մերժվում են իսկույն
սրբվում տարածքից
ես պատասխան չունեմ

ոչ մի ներրմբռնում՝ ուղղություն ցույց տալու
ոչ մի կայուն ձեռք թռիչք իրագործելու

բառերը սայթաքում են հիշողությունից և ես
միակն եմ ով ուսի վրայով հայացք է ձգում
մտահոգված արդյոք կգտնվի՞ հենք
վաղվա օրվանից կախվելու համար

բաց թողնված տեղում զուգադիպումից առաջ և հետո
ինչու՞ փնտրել ու գտնել պատասխաններ
երբ ժամանակն ինքը խիստ անտարբեր է
այն ամենին ինչին մենք սատարում ենք

երբ այստեղ ուր որ ծառերն օրորվում են
և դաշտից գալիս է խոտի անասունի ու բժժանքի հոտ
և նրանց կեղտը լռվում է մտքում
ինչու՞ կրկին խորհել ծանր ու տենդագին

ափիոն-արևը մայր է մտնում ծագում
ես դա գիտեմ վաղուց
գուցե դա՞ է հենց պատասխանը

ՇԵՐՏԱՏՎԱԾ

թղթերի մեջ
իմաստը
բնորոշել մենք անզոր ենք

մենք ընդամենը կարող ենք
թղթերի մեջ
խուսափել մեր մտքերից

ջղաձգվելով թե գրելով
իմաստը գտնում ենք
թղթերի մեջ

ԽՃԱՊԱՏԿԵՐ

երբեմն մատներս մատներիդ հյուսված
կամ բազուկներդ ինձ պինդ փաթաթված
կարող են մասնատել մեր ժամացույցը

որպեսզի մենք վերստին անմեղներն այն դառնանք
ովքեր գոտիների մասին գիտեն որպես
խճապատկերներ, ուր կտորները համակցվում են

մեր եզրագծերը հաճախ չեն համընկնում
բայց դրանք կարող են համապատասխանեցվել

ԱՐՏԱՑՈԼՈՒՄ

պետք է արտացոլվի լուսինն այս գիշեր.
այսօր բավականին խաղաղ է,
ես դուրս եմ նետել բոլոր կասկածներս
և սենյակս կառչել է լամպից՝ կնիքված իմ
խոնավ շուրթերով, լամպը տիրում է
իմ իրանին, այն երես է դարձնում
լուսնի-վրայի-լուսապսակով-մարդուց
ով ծանր քայլերով տրորում է
ամենն այն ինչին հասել եմ
երբ մարմինս դեռ ճկուն ու փքքուն էր

այս լամպի լույսը հստակորեն գիտե
ինչ խավար կարող է ներթափանցել.
տաք դեղի՞ն՝ ոչ, առանց սառը լուսնի
դժվար է խաղալ սպիտակի հետ,
այս գիշեր հանգիստ է հին ոսկորների
նինջի համար

հանգցրու լույսը
մարիր արտացոլումը

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ

ՕՐՈՐՈՑԱՅԻՆ

սերը երբեմն մահանում է քնի մեջ
անխառն նա հատում-անցնում է շեմը
թողնելով միայն մի փոքրիկ ակնարկ.
դու հավաքել ու ծրարել ես այն
բավական սերտած
միահյուսելու

արշալույսի հետ
դու փակում ես նրա աչքերը
անկախ քո կատարած գործողություններից
կամ քո հրաժեշտից -
արթնացիր
ինչ-որ կարևոր բան է սպրդել
առանց միանշանակ իմանալու ինչու

ԲԱՆՏԱԽՈՒՑԻ ԵՐԱՆԳՆԵՐԸ

երեխաները գալիս են, երեխաները գնում են
և անցնում, մինչ որոշ երեխաներ մեծանում են

այս վայրի վայրում երեխաներն իրենց աչքերով
հետևում են թռչուններին մութ երկնքի միջով

այս կարիքի մեջ երեխաները մեկնում են ձեռքերը
և իրենց հասու դարձնում բերրի հողերը

դժվար է դավանանքի այս խոպան հողում
ցանք անել, երբ որ երեխաներ են քաղցում

երեխաները գալիս են, երեխաները գնում են
վերջում մեծանում են լոկ որոշ երեխաներ

ՓՈՇՈՒ ՆՇՈՒՅԼ
(Գ.-ին)

երանի խոսեի քեզ հետ. իմ լեզուն
անհանգիստ էջանշան է քո պատմության էջում
իմ ձայնը փոշու ծվեն է որ պարում հեգնում
խաղում է դժվարահաս արևի շողերի ներքո
նեոնով լուսավորված քո գրադարանի մոտ

երանի պատմեի քեզ ավելի թեթև վիճակի մասին
որտեղ բառերը փախչում են գրքի կազմից,
մոլորեցնում ձայնս

բայց օրն այս մռայլ է, և փոշին տեղավորվել է
դարակների վրա: Լեզուս անտարբեր պառկած է
փաստերի վրա: Եթե փակես գիրքդ, եթե
խուսափես ժամանակի աղճատումից

ես չեմ պատմի քեզ, թե ինչ է նշանակում՝
հնարավոր-է-լինել

ՄԻ ԲԱԺԱԿ ԽՄԻՉՔ

երբեմն մի ժամի չափ անց եմ կացնում
համտեսելու իմ երբեմնի օրիորդությունը

մայրս մռմռում է սոուսի եռքի տակ
հորս աշխատավայրից կանչել են
քրոջս՝ հեռախոսով արված կատակները

թարմօդ ամռանը լռվում են բառարանում,
Մարսալֆորնի* կերոսինի հետևանքն է
խանձված քարը որ ներծծում է սեպտեմբերի անձրևը

բայց թանձր գոլորշու մեջ գրեթե խեղդված՝
ինչ-որ հասարակ ու պարզ հաճույքներով
և նվաղկոտ ժամի տևողությամբ

տարիքս օրհնում է ինձ և ես կում-կում խմում եմ
գիշերային այս մի բաժակ խմիչքը և հիշում

---

* *Մարսալֆորն - բնակավայր Մալթայի Հանրապետությունում*

ՄԱՐԻԱ ԳՐԵՉ ԳԱՆԱԴՈ
/Գրական կենսագրության ուրվագիծ/

Մարիա Գրեչ Գանադոն (ծն. 1943) անգլերենով դասախոսություններ էր կարդում Մալթայի, Քեմբրիջի և Հեյդելբերգի համալսարաններում: Նրա մալթերեն բանաստեղծությունների հինգ ժողովածուներից երկուսը՝ Izda Mhux Biss-ը (1999թ.) և Taht il-Kpiepel t'Ghajnejja-ն (2014թ.), ինչպես նաև երեք անգլերեն ժողովածուներից երկուսը՝ «Խելացնոր կտավը» (2005) և «Երիզվածքը» (2018), արժանացել են Մալթայի «Ազգային գիրք» մրցանակին: Գանադոյի բանաստեղծություններն առ այսօր թարգմանվել են տասնյակ լեզուներով՝ ֆիններեն, չեխերեն, կատալոներեն, սլովակերեն, հունգարերեն, հոլանդերեն և այլն, որոնց ավելացավ հայերեն թարգմանական գիրքը: Մ.Գանադոյի պոեզիան անգլերենով տարածվել է Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Ավստրալիայում, Հարավային Աֆրիկայում և Կիպրոսում: Նրա վերջին հրատարակությունը՝ «Անգլիական երիզվածքը», ֆինանսավորվել է Մալթայի «Ազգային գրքի» խորհրդի կողմից և առաջին բանաստեղծական ժողովածուն է, որ լույս է տեսել բրիտանական ամենահեղինակավոր հրատարակչություններից մեկի՝ Մերլինի կողմից: 2019թ. Մարիա Գանադոն դարձել է մալթական պոեզիայի առաջին դափնեկիրը:

Տարբեր երկրներից Մարիան հրավիրվել է գրական բազմաթիվ միջոցառումների. մասնավորապես, 2005թ. նա ներկա էր LAF (Literature Across Frontier /Գրականություն սահմանից դուրս) փառատոնին, որտեղ ներկայացրել է Մալթան, իսկ Inizjamed կազմակերպությունների հետ նա կազմակերպել է Re-Vision միջազգային սեմինարը:

2008թ. Մալթայի Սենթ Ջեյմս Կավալիեր կենտրոնի փոխանակման ծրագրով Մ.Գանադոն վեց շաբաթ աշխատել է Վիրջինիայի/ԱՄՆ/ ստեղծագործական արվեստի կենտրոնում՝ որպես գիտաշխատող: Նա անգլերեն է թարգմանում մալթացի գրողների պոեզիան ու արձակը:

2000թ. նրան շնորհվել է պետական շքանշան (Հայրենիքի ծառայության համար), 2015թ. «Ազգային գրքի» խորհրդի կողմից արժանացել է «Կյանքի նվաճումներ», իսկ 2017թ. հայրենի քաղաք Ֆլորիանայի՝ «Պատվո վահան» մրցանակների:

Մարիան ունի 3 երեխա և 3 թոռ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՃԵՂՔԵՐ 5
Երիզվածք 6
Արթնացում 8
Առավոտ 9
Խոհեր 10
Ուիլյամի ներսում (1991) 11

ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ (Ուղեկցորդներ) 35
Միմեսիս 36
Անգիր 38
Բնորոշ գծեր 39

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՆԿԱՐՆԵՐ 41
Երկու երիտասարդ աղջիկների դիմանկարը 42
Քաղցրաբլիթ 43
Սպագետտի բոլոնեզե 44
Լուսնոսկի 45
Զոլավոր շապիկներով երեք երեխաների լուսանկար ... 46
Արիայի տիրույթը 47
Մի այլ տարածք 49
Այդ գիշեր 50
Ճաշ 51
Վերարտադրություն 52
Ծննդատուն 54
Զարկերակ 55
Պարզ ուրվագիծ 57
Տոհմ 58

ԱՅԼ ՆԿԱՐՆԵՐ (ընկերներ ու լանդշաֆտներ) 59

Դեմք 60
DÉJÀ VU 61
Թակոց 62
Ընդհանուր լողավազան 63
Ժանեկագործուհին 64
Նմուշ (2 նկար) 65
Զինվորի կինը 66
Նկարի տղան 67
Փայտիկ 69
Երեկոյան զբոսանք 70
Զբոսանք 71
Դվեյրա (Գոզո) 72
Վաղանցուկ պահ 74
Կրաքար 75

ԿԱՄԵՈՆԵՐ 76
Ինքնություն 77
Պատմություն 78
Զանազան 79

ՀԻՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ / ՆՈՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ
ԵՎ ՄՏՔԻ ԱՅԼ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ 81
Բաժին 82
Սահման 84
Ուզում եմ, ուզում եմ 85
Ծիծեռնակ փոքրիկ ծիծեռնակ 86
«Ա» 87
Ծագում 88
Բազմանշանակ 89
Ուրիշ հեքիաթ 90
Ջիլ 91

Ջերուշա 92
Ջուլիետ 93
Ցուցապաստառ 94
Այնտեղ՝ վերևում 95
Ծիածանի վրայով 96
GEMÜTLICH 97
Սրբապղծություն 98
Հարցնելով իր որդուն 99
Հայրը 101

ԽՈՍՔԵՐ 102
Քաղցր բամբակ 103
Ձգման վերահսկողություն 104
Լազանյա 105
Մարգարիտ 106
Սալորներ 107
Սեզոնային 108

ՍԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐ 109
Անգղ 110
Եղանակի տեսություն 111
Կախարդված 112
Տեղահանված 113
Փրկվածը 114
Հուշարձաններ 115
Լիբանանի մայրիներ 116
Թաղամաս 16 117
Մարդկային ցեղ 118
Նավակ դեպի ուտոպիա 119
Գերեզմանաքար 120

ՀԱՅԵԼԻՆԵՐԻ ՍՐԱՀ 121
Գուչի 122
Տարիքն առնել 123
Պոռթկում 124
Առաջին սեր 125
Մենակատարում 126
Նուար ֆիլմ 127
Անհավասարակշիռ 128
Պարանոյա 129
Խուց 130
Արևհարություն 131
Հոսանքի անջատում 132
DE SENECTUTE 133
Օրորվելով 134

ՎԵՐԱՑԱՐԿՈՒՄՆԵՐ 135
Բնություն մաքրողը 136
Վախ 137
Ցեղ 138
Խզբզոց 139
Ափագիծ 140
Պատասխան 141
Շերտատված 142
Խճապատկեր 143
Արտացոլում 144

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐ 145
Օրորոցային 146
Բանտախուցի երանգները 147
Փոշու նշույլ 148
Մի բաժակ խմիչք 149

Հեղինակի մասին 150

Մարիա Գրեչ ԳԱՆԱԴՈ

ԵՐԻԶՎԱԾՔ

բանաստեղծություններ

Թարգմանություններն անգլերենից՝
Քրիստինա ՔՈՉԱՐՅԱՆԻ

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Թ. Մաթեւոսյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափսը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 10 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության
տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով, Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով, Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խռովությունը. մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը. Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017
Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017

Ֆյոդոր Սոլոգուբ. «Ձնչադեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ուեյսին Սյուընն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուքսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2019
20-րդ դարի ռուսական պատմվածք (անթոլոգիա) - 2019
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 7) - 2019
Գվինեթ Լյուիս. «Քաոսի հրեշտակները» - 2020
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ. Ազատ մարդը» - 2020
Ցերինգ Նորբու. «Փրկված գառը» - 2020
Չժան Յավեն. «Դարերի կանչը» (Մտորումներ Հոնկոնգի
մասին. իրական պատմություն) - 2020
Կոնֆուցիոս. «Զրույցներ» - 2020
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 8) - 2021

www.vogi-nairi.am
էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +374 97252323